ՏԵՂԵԿԱՆՔ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Democracy
Development
Foundation

ՎԱՆԱՁՈՐ 2023

Տեղեկանքը կազմեցին՝ Նազելի Մովսեսյան

Անուշ Պետրոսյան

Խմբագիր՝ Արքուր Սաֆունց

Ներածություն

Հելսինկյան ֆաղաֆացիական ասամբլեայի Վանածորի գրասենյակը (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) շարունակում է հետևել ՀՀ զինված ուժերի բարեփոխումներին, վերակառուցմանը և արդիականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների իրականացման գործընթացին:

ՀՀ Կառավարության 2021 - 2026 թթ. հնգամյա ծրագրով[1] նախատեսված առաջնահերթությունների, մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Կազմակերպությունը 2021 թվականից ի վեր հրապարակել է երկու տեղեկանք[2]: Ինչպես նախորդ երկու, այնպես էլ ներկայացվող տեղեկանքում Կազմակերպության կողմից ուսումնասիրություններն իրականացվել են ՀՀ զինված ուժերում բարեփոխումների վերաբերյալ պաշտոնական աղբյուրներով և զանգվածային լրատվամիջոցներով տարածված և հանրությանը հասանելի դարձած տեղեկությունների վերլուծությունների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված տեղեկատվության հարցումների հիման վրա:

ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետի առաջնահերթությունները հետևյալն են.

1. Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի:
2. Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում:
3. Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով:
4. Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում:
5. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում:
6. Ռազմական կրթության և գիտության զարգացում:
7. Տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ոլորտի բարեփոխումներ:

[1] https://www.gov.am/files/docs/4586.pdf.
[2] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/, https://hcav.am/military-reforms-21/

8. Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

9. Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացում, զինծառայության գրավչության բարձրացման և զինծառայողի հեղինակության մեխանիզմների կատարելագործում, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի իրականացում, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական նոր ծրագրեր:

10. Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերի կարգապահության խթանման, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:

11. Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹԹ ԾՐԱԳՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԸՍՏ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջնահերթություն 1

Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի

ՀՀ կառավարության **2021-2026** թթ. ծրագրով նախատեսված է, որ պետք է ստեղծվեն աստիճանական և կանոնակարգված ձևով պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատման օրենսդրական հիմքեր:

Հենց այս կետից է բխում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը[3], որով ՀՀ պաշտպանության նախարարությունը առաջարկում էր շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ուսումնական փուլը լրանալուց հետո (միջինը՝ չորսուկես ամիս), զինծառայողի կողմից ՀՀ պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու պայմանով՝ վաղաժամկետ արձակել պարտադիր զինվորական ծառայությունից: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը պաշտպանական գերատեսչությունը հանրային քննարկման դրեց իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Նախագիծը, սակայն, չընդունվեց:

Անդրադառնալով օրենքի նախագծին, ՀԲԱ Վանաձորի գրասենյակն առանձնացրել էր մի շարք խնդրահարույց կետեր, ինչպիսիք են՝

1. նախագիծը չի քննարկվել մասնագիտական հանրույթի հետ մինչ շրջանառվելը,
2. նախագիծը կոպտորեն խախտում է խտրականության արգելքի սկզբունքը՝ ստեղծելով զինծառայողների համար ոչ հավասար պայմաններ, տարբերակված մոտեցում՝ գույքային դրությամբ պայմանավորված,
3. նախագիծը խնդրահարույց է նաև սոցիալական արդարության տեսանկյունից, քանի որ պարտականություններն անձանց վրա դրված են անարդար կերպով. հասարակության միայն հարուստ խավը կարող է հնարավորություն ստանալ խուսափելու իր պարտականությունից և օգտվել օրենքով սահմանված արտոնությունից:
4. նախագիծը խորացնելու է սոցիալական շերտերի միջև բևեռացվածությունը: Հանրային վստահության բարձրացման տեսանկյունից որևէ բարենպաստ ազդեցություն չի կարող ունենալ,
5. բացի այդ, անհասկանալի է՝ ինչ հաշվարկների և գնահատումների հիման վրա է սահմանվել վճարվող գումարի չափը՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2020 թվականին աղքատության մակարդակը Հայաստանում գնահատվել է 27%:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նաև «Ես եմ» ծրագրին փոխարինող այլ առաջարկ ներկայացրեց՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը[4]: Հիշեցնենք, որ «Ես եմ» ծրագրով պարտադիր

[3] https://www.e-draft.am/projects/4679
[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=174058

ժամկետային զինծառայության ենթակա քաղաքացին ՊՆ-ի հետ կնքում էր պայմանագիր, ըստ որի՝ ծառայության ժամկետ էր սահմանվում 3 տարին, որի առաջին 6 ամիսը զինծառայողը պետք է լիներ ուսումնական զորամասում: Հաջորդ 30 ամիսների ընթացքում զինծառայողը հաջորդաբար պետք է ծառայությունը անցկացներ մարտական դիրքերում (2 շաբաթ), զորամասում (1 շաբաթ) և արձակման մեջ (1 շաբաթ): 3 տարին լրանալուց հետո, երբ զինծառայողը զորացրվում էր, նրան տրամադրվում էր 5 միլիոն դրամ պատվովճար: Ըստ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ «Ես եմ» ծրագրով ծառայության անցնելու ցանկություն հայտնողների քանակն ի սկզբանե չի բավարարել ակնկալվող քանակները և աստիճանաբար նվազել է, իսկ 2021-2022թթ. զորակոչերի ընթացքում չի եղել ոչ մի դիմում: Բացի այդ, ինչպես հայտնեց ՀՀ պաշտպանության նախարարությունը, 2020 թվականի ռազմական գործողություններից հետո մեծ թվով զինծառայողներ վաղաժամկետ հրաժարվեցին ծրագրից և շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 24-ամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով արձակվեցին զինվորական ծառայությունից: Ծրագրով զինվորական ծառայություն անցնող անձանց ծառայության ժամկետն ավարտվեց 2023 թվականի հունվարին:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը ներդրեց «Պաշտպան Հայրենյաց[5]» ծրագիրը: Այն իրենից ենթադրում է շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից անցում պայմանագրային զինվորական ծառայության, որի ժամկետը նախատեսվում է 5 տարի: Ինչպես նաև կնքված պայմանագրի ժամկետի ավարտից հետո, անկախ զինծառայությունից արձակվելու կամ ծառայությունը շարունակելու ցանկությանը կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու հանգամանքին, այդ զինծառայողներին կտրամադրվի պատվովճար՝ 5 միլիոն դրամ, որը զինծառայողը կամ քաղաքացին կարող է տնօրինել իր հայեցողությամբ՝ առանց որևէ պարտադիր պայմանի (մինչդեռ «Ես եմ» ծրագրով պատվովճարը կարող էր օգտագործվել միայն բնակարան գնելու կամ ուսման վարձի կամ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով):

Ի սկզբանե նախատեսվում էր, որ «Պաշտպան հայրենյաց» ծրագրով 5 տարվա ընթացքում պայմանագրային զինծառայողների ամսական վարձատրության չափը՝ 400 հազար դրամ, հաշվարկվելու է՝ հիմք ընդունելով 24 միլիոն դրամով պարտադիր ժամկետային զինծառայությունից վաղաժամկետ ազատվելու հնարավորության ստեղծումը:

Այսպես, 24 մլն դրամի դիմաց պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու վերաբերյալ օրենսդրական նախագիծը չընդունվեց, սակայն «Պաշտպան հայրենյաց» ծրագրի նախագիծն ընդունվեց կառավարության կողմից 2023 թ փետրվարի 9-ին և ուժի մեջ մտավ 2023 թ փետրվարի 10-ին:

[5] https://www.mil.am/hy/news/11230 , https://www.arlis.am/documentview.aspx?docid=174058

ՀՀ կառավարության հնգամյա (2021-2026թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ Կազմակերպության 2023թ. փետրվարի 14-ի գրությանն ի պատասխան ՀՀ Պաշտպանության նախարարությունը 2023 թ. մարտի 13-ին հայտնեց, որ ժամկետային զինվորական ծառայության ժամկետների փոփոխության ուղղությամբ այս փուլում դեռևս աշխատանքներ չեն իրականացվել: Միևնույն ժամանակ պատասխանի մեջ «Պրոֆեսիոնալ բանակի» անցման ուղղությամբ նշվեց, որ ներդրվել է պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցնելու «Պաշտպան Հայրենյաց» ծրագիրը, որին արդեն մանրամասն անդրադարձել ենք: ՊՆ կողմից նաև տեղեկացվեց, որ ներդրվում է նաև պրոֆեսիոնալ սերժանտական համակարգը և ՀԱՄ (հրամանատրում առաջադրանքի միջոցով) կոնցեպտը: Ի դեպ, առաջադրանքի միջոցով հրամանատրումը ենթադրում է[6] ռազմական (մարտական) գործողությունների վարում ապակենտրոնացված կերպով՝ հիմնված առաջադրանքներ հիշեցնող հրամանների վրա: Այն ենթականերին լիազորում է կիրառել իրենց դատողությունը, որոշելու, թե ինչպես կատարել առաջադրված խնդիրները և օգտագործում է մարտում մարդկային գործոնը՝ շեշտը դնելով վստահության, կամքի ուժի, նախաձեռնության և ստեղծագործականության վրա:

2022 թվականի նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովում ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ներկայացրեց «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերը[7]:

Նախագծերով նախատեսվում էր պայմանագրային զինծառայողների ատեստավորման միջոցով վերջիններիս համար սահմանել լրավճար: Օրենսդրական փոփոխության նպատակն էր բարձրացնել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը: Այդ նպատակով նախատեսվում էր անմիջականորեն մարտական և դրան հավասարեցված խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների համար սահմանել լրավճար՝ զինծառայողների ատեստավորման միջոցով, և դրանով իսկ ստեղծել նախադրյալներ արհեստավարժ պայմանագրային զինվորական ծառայության զարգացման համար:

[6] http://www.hayzinvor.am/30204.html

[7] https://www.e-draft.am/projects/4644/about

Ատեստավորմանը զինծառայողներն առաջին անգամ մասնակցում են կամավոր: Ատեստավորված և հավելավճար ստացող զինծառայողները կարող են ատեստավորվել 3 տարին մեկ անգամ: Իսկ հավելավճարի չափը, ըստ ՀՀ պաշտպանության նախարարի, սահմանվելու է կառավարության որոշմամբ:

2022 թ. դեկտեմբերի 7-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը հաստատվեց և ուժի մեջ մտավ նույն թվականի դեկտեմբերի 23-ին[8]:

Արդեն 2023 թ. փետրվարի 9-ի կառավարության նիստի ժամանակ ՀՀ կառավարությունը հաստատեց «Բանակում մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների որակավորման կարգը», որի արդյունքներով հաշվարկվելու են նաև զինծառայողներին տրվող հավելավճարների չափերը:

Ատեստավորումը նախատեսվում է իրականացնել է պաշտպանության նախարարի հրամանով ստեղծված ատեստավորման 5 կենտրոններում, 10 հանձնաժողովների միջոցով:

Ատեստավորումը ներառում է զինծառայողների մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստային գնահատում, ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճանի գործնական գնահատում: Ատեստավորման մաս կազմող թեստային առաջադրանքը բաղկացած է 50 հարցից: Մասնագիտական գիտելիքների և ծառայողական պարտականությունների իմացության թեստային առաջադրանքների առնվազն 21 հարցին ոչ ճիշտ պատասխանելու դեպքում զինծառայողը ստանում է «անբավարար», 30-ից մինչև 34-ը ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «բավարար», 35-ից մինչև 44-ը ներառյալ հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «լավ», իսկ 45 և ավելի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում՝ «գերազանց» գնահատական:

Ատեստավորում չանցած զինծառայողները տարվա ընթացքում կարող են թեստավորում անցնել ոչ ավել, քան երկու անգամ մեկ տարվա ընթացքում: Իսկ ատեստավորման անբավարար գնահատական ստանալու դեպքում զինծառայողների գործող պայմանագրի ժամկետի ավարտից հետո նոր պայմանագիր չի կնքվի:

Հատկանշական է՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը ընդունելի է համարում զինծառայողների հետ պայմանագրի լուծման տարբերակը՝ միաժամանակ ունենալով զինված ուժերի համալրման խնդիրը:

Սույն դրույթը որոշ ռիսկեր է պարունակում նաև այն իմաստով, որ հստակ չէ՝ արդյոք կան երաշխիքներ, որ ատեստավորման գործընթացը անկողմնակալ և արդար է կազմակերպվում, ինչպես պիտի

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=172096

ապահովվի դրա թափանցիկությունը, արդյոք նման խնդիրները բացասաբար չեն ազդի ծառայության հանդեպ զինծառայողների վստահության վրա:

2023 թ. հունիսի 5-ին մեկնարկեց զինծառայողների ատեստավորման գործընթացը: Զինծառայողները հանձնեցին շարային և ֆիզիկական պատրաստության նորմատիվները: Հաջորդ օրը՝ 2023 թ. հունիսի 6-ին կայացավ զինծառայողների մասնագիտական գիտելիքների ստուգման փուլը: Ատեստավորման գործընթացը գնահատող հանձնաժողովում ընդգրկված էին Շիրակի և Արագածոտնի նախկին մարզպետները, ովքեր այժմ զբաղեցնում են վարչապետի օգնականի պաշտոնները, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ:

Ըստ պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանի՝ պատգամավորներին ևս կարող է հնարավորություն տրվել մասնակցել ատեստավորման գործընթացին՝ դիտորդի կարգավիճակում: Ըստ Սարգսյանի՝ նման կերպ գործընթացն առավել թափանցիկ կլինի[9]:

Այսպիսով, ամփոփելով առաջնահերթության կատարման աստիճանը, կարող ենք ասել, որ ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրի զինված ուժերի բարեփոխումների սույն առաջնահերթությամբ նախատեսված պրոֆեսիոնալ բանակի անցման գործընթացի ուղղությամբ իրականացվում են որոշակի քայլեր, որոնք, սակայն, ակնհայտորեն դեռևս բավարար չեն առաջադրված նպատակին հասնելու համար և նրանց արդյունավետությունը դեռ վաղ է գնահատել: Արձանագրենք նաև, որ եթե Կազմակերպության կողմից զինված ուժերի բարեփոխումների մասին նախկինում հրապարակված երկու տեղեկանքներում[10] հստակ չէին, թե պրոֆեսիոնալ բանակի ստեղծման համար ինչ գործողություններ են իրականացվում, ապա այժմ կատարվող գործողությունները որոշ չափով տեսանելի են:

Ինչ վերաբերում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի կրճատմանը, ապա այդ ուղղությամբ դեռևս աշխատանքներ չեն իրականացվել:

[9] https://www.armenpress.am/arm/news/1112707/arm/

[10] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/, , https://hcav.am/military-reforms-21/

Առաջնահերթություն 2

Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում:

Կառավարության **2021-2026** թթ. հնգամյա ծրագրում որպես առաջնահերթություն նշվում է. «Կառավարությունը բարձրացնելու է Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետությունը: Իրականացվելու են անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանը, այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորություններին ու պարտականություններին»:

Ծրագրով նախատեսված է մշակել նոր Ռազմական դոկտրին, պետության պաշտպանության պլան, կատարելագործել պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը, վերանայել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը:

Բացի այդ ներդրվելու է միասնական ավտոմատացված կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովելու է ժամանակակից ռազմական գիտությանը համահունչ արագ և առաջանցիկ որոշումների կայացում:

Այդ նպատակով ՀՀ զինված ուժերի կառավարման և զորային օղակներում իրականացվելու են կազմակերպական և հաստիքային փոփոխություններ: Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կազմավորվելու են մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ, երկար ժամանակ ինքնուրույն մարտական գործողություններ վարելու ունակ զորամիավորումներ ու ստորաբաժանումներ:

2020 թ. հուլիսի 10-ին ընդունվեց ՀՀ անվտանգության նոր ռազմավարությունը[11], որը երկրորդն էր անկախության ողջ ժամանակահատվածում (առաջինն ընդունվել էր 2007 թ-ին): Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայման ուղղությամբ տեղեկություններ հայտնի չեն: Հայտնի չեն նաև տեղեկություններ նոր Ռազմական

[11] https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

դոկտրինի, Պետության պաշտպանության պլանի մշակման աշխատանքների վերաբերյալ և թե արդյոք նման աշխատանքներ իրականացվում են, թե ոչ:

Ըստ 2022 թվականի հուլիսի 7-ին «Պաշտպանության մասին» օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը, որն իր մեջ, ի թիվս այլ գործառույթների, ներառում է ռազմական դրության հայտարարում, պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին ՀՀ Ազգային ժողովին առաջարկության ներկայացում, Հանրապետության նախագահին՝ պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն ՀՀ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանը, որը 2022 թվականի հուլիսի 7-ին կատարված լրացմամբ ներառում է՝

1) պաշտպանության պլանի մտահղացումը.

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը.

4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլանը.

5) Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը.

6) Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը:

Հստակեցվում են Անվտանգության խորհրդի լիազորությունները պաշտպանության ոլորտում, մասնավորապես.

1) իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում և վերանայում.

2) հաստատում է՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանը,

բ. ռազմական պլանավորման կանոնակարգը,

գ.զինված ուժերի և այլ զորքերի զորանոցաբնակելի ֆոնդի զարգացման ծրագրերը,

դ. զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.

3) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Ի դեպ, պաշտպանության պլանը ներառում է

1) պաշտպանության պլանի մտահղացումը.
2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով.
3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը.
4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլանը.
5) Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը.
6) Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը:

Ըստ էության, Անվտանգության խորհրդի լիազորություններն ընդլայնվել են, քանի որ նախկինում, մինչ փոփոխությունը, Անվտանգության խորհուրդը չէր հաստատում ռազմական պլանավորման կանոնակարգը և զինված ուժերի և այլ զորքերի զորանոցաբնակելի ֆոնդի զարգացման ծրագրերը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2022 թ. հուլիսի 7-ի փոփոխությամբ ՀՀ պաշտպանության նախարարության լիազորությունները՝ ի թիվս այլ գործառույթների լրացվեցին հետևյալ գործառույթներով.

- համակարգել զինված ուժերի կիրառման գործընթացը՝ զինված ուժերի կիրառման պլանի համաձայն.
- հաստատել զինծառայողների կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն իրականացնելու, զենքի, ռազմամթերքի, ռազմական այլ գույքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների ու նյութերի հետ վարվելու և պահպանության, տրանսպորտային միջոցների և մարտական տեխնիկայի վարման ու շահագործման, թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները, զինծառայողների որակավորումների տեսակները և դրանց շնորհման կարգը.
- սահմանել Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատություններում սպայական կազմի պատրաստության կարգը, ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և ներկայացնելու ժամկետները, ռազմաուսումնական հաստատություններից սովորողներին ազատելու (հեռացնելու), վերականգնելու կամ նույն կուրսում թողնելու կարգը.

- իրեն կից ստեղծել խորհրդակցական մարմիններ՝ նախարարության կոլեգիա ու հասարակական խորհուրդ, և հաստատել դրանց աշխատակարգերը.
- հաստատման ներկայացնել ՀՀ պաշտպանության պլանում ներառվող՝ ՀՀ պաշտպանության նախարարության և զինված ուժերին վերաբերող պլաններն ու ծրագրերը:

Փոփոխություններ կատարվեցին նաև աշխարհազորի վերաբերյալ հոդվածում, մասնավորապես՝ նախկինում սահմանված էր, որ աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ ՋՈՒ ԳՇ պետը՝ զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհազորային շտաբի միջոցով: Փոփոխությամբ լրացվեց, որ աշխարհազորի անմիջական ղեկավարումն իրականացնում է ՀՀ ՋՈՒ Գլխավոր շտաբի տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարությունը: Կատարված լրացումներից է նաև այն, որ աշխարհազորայինների պատրաստության և կիրառման ժամանակահատվածում հաշվարկվում է դրամական ապահովություն՝ ըստ նշանակված զինվորական պաշտոնների՝ պայմանագրային զինծառայողների համար օրենքով սահմանված չափով: Նախկինում այդ դրույթը բացակայում էր:

Այսպիսով, այս առաջնահերթությամբ նախատեսված պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծման ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի (այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների) հստակեցմանն ուղղված որոշակի օրենսդրական փոփոխություններ կատարվել են:

Ինչ վերաբերում է միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրմանը, ապա ըստ ՀՀ ՊՆ-ի՝ ավտոմատացված կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ զինված ուժերի կառավարման և զորային օղակներում նախապատրաստվում են կազմակերպական և հաստիքային փոփոխություններ, սակայն հստակ չի նշվում, թե ինչ կազմակերպական և հաստիքային ինչ փոփոխությունների մասին է խոսքը և երբ է նախատեսվում դրանք ավարտել:

Կրկին դիտարկելով նախորդ երկու տեղեկանքները՝ արձանագրում ենք, որ այս առաջնահերթության մասով գրեթե ֆայլեր չեն ձևավորվել, չկան իրականացված հստակ միջոցառումներ, ազգային անվտանգության ռազմավարության վերանայման ու նոր ռազմական դոկտրինի մշակման ուղղությամբ իրականացվող ֆայլերի մասին տեղեկություններ հայտնի չեն: Եթե նույնիսկ որոշակի ֆայլեր ձևավորվում են, ապա հստակ է, որ որոշումների կայացումը մասնակցային բնույթ չի կրում:

Առաջնահերթություն 3

Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով:

Կառավարության սույն առաջնահերթությանը՝ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավմամբ արդյունավետության բարձրացմանը հասնելու նպատակով, ըստ հնգամյա ծրագրի, «ձևավորվելու են մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումներ»:

Ըստ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2022 թվականի հուլիսի 7-ի փոփոխության՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կառավարչական իրավահարաբերությունները կարգավորվում են օրենքով: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալն ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալների պաշտոնները կարող են հանդիսանալ նաև զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական խմբի պաշտոններ, որոնց թիվը սահմանում է ՀՀ վարչապետը[12]:

Փաստորեն, ըստ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ ԶՈՒ գլխավոր շտաբի պետն այսուհետ ի պաշտոնե Պաշտպանության նախարարի առաջին տեղակալն է, որը, սակայն, չի հանդիսանում նախարարին փոխարինող պաշտոնատար անձ:

Հիշեցնենք, որ ՀՀ Գլխավոր շտաբի պետի պաշտոնը 2022 թվականի փետրվարից թափուր էր, քանի որ նախկին գլխավոր շտաբի պետը՝ Արտակ Դավթյանը, պաշտոնանկ էր արվել բանակին անորակ հրթիռներ մատակարարելու քրեական գործով՝ որպես մեղադրյալ ներգրավվելուց հետո: Գործող իշխանությունը հայտարարել էր, որ ԳՇ պետ կնշանակվի օրենքի փոփոխությունից հետո: Փաստացի, հետպատերազմյան Հայաստանում Սահմանադրությամբ ամենաբարձր զինվորական պաշտոնյայի հաստիքը 4 ամսից ավելի թափուր էր մնացել:

2022 թվականի հուլիսի 14-ին վարչապետի առաջարկությամբ և ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր

[12] https://www.arlis.am/documentview.aspx?docid=166849

Էդվարդ Ասրյանը: Վերջինս 2021 թվականի մայիսին նշանակվել էր ԳՇ պետի տեղակալ, ապա սեպտեմբերին ազատվել այդ պաշտոնից:

Կադրային փոփոխություն է տեղի ունեցել նաև ՀՀ Զինված Ուժերի ավիացիայի վարչությունում: 2022 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ նախագահի հրամանագրով՝ Գագիկ Ասլանյանն ազատվեց Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի պետ-վարչության պետի պաշտոնից: Նույն օրը մեկ այլ հրամանագրով՝ Հովհաննես Վարդանյանը նշանակվեց ՀՀ զինված ուժերի ավիացիայի պետ-վարչության պետ:

2023 թվականի հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում բռնկված հրդեհի հետևանքով 15 ժամկետային զինծառայողներ մահացան: Դեպքից անմիջապես հետո պաշտոնից ազատվեցին 2-րդ բանակային կորպուսի հրամանատար Վահրամ Գրիգորյանն ու ևս 8 բարձրաստիճան զինվորականներ, այդ թվում՝ 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Միհրան Մախսուդյանը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ թիկունքի և ԿՇՄ գծով թիկունքի պետ՝ գնդապետ Շիրազ Խաչատրյանը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի մարտական հերթապահության գծով տեղակալ գնդապետ Արթուր Օհանյանը, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Սարգիս Մազմանյանը, Բրիգադի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Ռուդիկ Հակոբյանը, Բրիգադի հրամանատարի տեղակալ, թիկունքի և ԿՇՄ գծով փոխգնդապետ Գոռ Աղեկյանը, Բրիգադի ինժեներական ծառայության պետ, կապիտան Տիգրան Ղազարյանը, Բրիգադի ինժեներասակրավորային վաշտի հրամանատար, կապիտան Գոռ Սարգսյանը[13]:

2023 թվականի փետրվարի 1-ին որոշում կայացվեց ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներական ծառայության սպա, կապիտան Եղիշե Հակոբյանի նկատմամբ հարուցել հանրային իրական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասով (զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ): Ավելի ուշ՝ մարտի 17-ին Եղիշե Հակոբյանը ձերբակալվեց:

Ավելի վաղ ձերբակալվել էր նաև զորամասի կոմունալ շահագործման ծառայության, հակահրդեհային պաշտպանության և փրկարար աշխատանքների ծառայության պետը, ում մեղադրանք

[13] https://www.1in.am/3218109.html

առաջադրվեց պաշտոնեական անփութության համար: Նույն մեղադրանքն առաջադրվեց նաև զորամասի հրամանատարի տեղակալ Գոռ Աղաբեկյանին[14]:

2023 թվականի փետրվարի 9-ին որոշում կայացվեց ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի հրամանատար Գ.Մ.-ի նկատմամբ հարուցել հանրային բրեական հետապնդում՝ ՀՀ բրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (զինվորական պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

Այսպիսով, 2023 թ հունվարին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղի ունեցած պատահարի հետևանքով պաշտոնանկ արվեցին 9 զինվորական պաշտոնյաներ:

ՀՀ նախագահի 2023թ. հունվարի 25-ի հրամանագրով Առաքել Մարտիկյանն ազատվեց ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից: Նախագահի մեկ այլ հրամանագրով Սամվել Մովսիսյանը նշանակվեց ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության պետ-Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ:

ՀՀ նախագահի 2023թ. փետրվարի 17-ի հրամանագրով Սմբատ Գրիգորյանը նշանակվեց Զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության պետ՝ ազատվելով 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից: Նախագահի մեկ այլ հրամանագրով նույն պաշտոնին նշանակվեց Սասուն Բադասյանը:

2021 թ հրապարակված առաջին տեղեկանքում արձանագրել էինք, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո՝ մեկ տարվա ընթացքում կատարվել էր փոփոխություն 13 զինվորական պաշտոններում:

2021 թ. դեկտեմբերից մինչև 2022 թ. հուլիսի կեսն ընկած ժամանակահատվածում՝ 8 ամիսների ընթացքում, ըստ հրապարակային տվյալների կատարվել են փոփոխություններ ԶՈՒ ԳՇ կրկին 13 զինվորական պաշտոններում:

2022 հուլիսի կեսից մինչև 2023 թ. հունիս ընկած ժամանակահատվածում ևս 13 զինվորական պաշտոններում փոփոխություն է կատարվել, որից միայն 9-ը 2023 թ. հունվարին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղի ունեցած հրդեհի հետևանքով զինծառայողների մահվան դեպքի հետ կապված:

Զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի արդյունավետության բարձրացումը կադրային փոփոխությամբ իրականացնելը չի կարող բավարար լինել արդյունավետության բարձրացման համար: Կարող ենք արձանագրել, որ նման հաճախականությամբ կատարվող կադրային փոփոխությունները, առանց համակարգային և բովանդակային փոփոխությունների, չեն երաշխավորում

[14] https://www.azatutyun.am/a/32248726.html

զինվորական ծառայության անվտանգության կանոնների պահպանումը, զինվորական կարգապահության ապահովմանը, զինված ուժերում մարդու իրավունքների գերակայության սկզբունքի իրականացումը և ի վերջո զինված ուժերի մարտունակության բարձրացումը:

Ինչ վերաբերում է սույն առաջնահերթությամբ նախատեսված մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումների ձևավորմանը, ապա նշենք, որ Կազմակերպության կողմից 2023 թվականի փետրվարին ՀՀ ՊՆ ուղարկված հարցմանն ի պատասխան տեղեկացվեց, որ «նախատեսվում է ձևավորել մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումներ»: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումներ դեռևս ձևավորված չեն:

Առաջնահերթություն 4

Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում:

Սույն առաջնահերթությամբ նախատեսվում է խթանել ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա:

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ «շարունակվելու են սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացները: Առավել նպատակային բաղաքականություն է իրականացվելու դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: Հատուկ կարևորություն է տրվելու այդ ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացմանը, մասնավորապես՝ ընդլայնվելու է Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը, որն առաջնահերթ ուղղվելու է համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

Ինչպես արդեն նշեցինք՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2022 թվականի հուլիսի 7-ին կատարված փոփոխության համաձայն ՀՀ կառավարությունն իրականացնում է ՀՀ պաշտպանության բաղաքականությունը, այդ թվում՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների կուտակման և շահագործման (ծախսի) նորմաների և շահագործման ժամկետների սահմանման կարգը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու ռազմական

հնարավորության այլ հյուրատեխնիկական միջոցները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու և դրանց օտարման կամ ոչնչացման կարգը:

ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ ՀՔԱ Վանածորի գրասենյակի գրությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ

- սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացների իրագործման համար ընդլայնվել է ռազմատեխնիկական համագործակցության շրջանակը և կնքվել են 3 տասնյակից ավելի պայմանագրեր,
- ՀՀ պետական սահմանի հայ-ադրբեջանական սահմանի տեղամասի պահպանության պատշաճ կազմակերպման համար ձեռք են բերվել անհրաժեշտ համակարգեր, ինժեներական, շինարարական, ուսումնական և այլ միջոցներ,
- ՀՀ զինված ուժերի ավիացիան համալրվել է ժամանակակից բազմաֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար,
- շարունակվել է տեսադիտարկման համակարգերի տեղադրումը՝ դրանք համակցելով ընդհանուր ցանցին և հասցնելով ՀՀ զինված ուժերի օպերատիվ կառավարման կենտրոն:

2022 թվականի հուլիսից հայկական ու հնդկական մամուլում շրջանառվեցին տեղեկություններ այն մասին, որ Հայաստանը պատրաստվում է Հնդկաստանից ռազմական տեխնիկա ձեռք բերել: Համաձայն հնդկական Economic Times պարբերականի հրապարակման՝ Հնդկաստանի պաշտպանության նախարարությունը Հայաստանի հետ հրթիռների, արկերի և զինամթերքի մատակարարման խոշոր պատվեր է ստորագրել: Ըստ նույն պարբերականի՝ երկու երկրների կառավարությունները զենքի և զինամթերքի մատակարարման պայմանագրերը կնքել են 2022 թվականի սեպտեմբերին[15]: Գործարքի գինը գնահատվում է մոտ 245 մլն դոլար: Հնդկաստանը Հայաստանին սպառազինություն էր վաճառել նաև 2020 թվականին: Այդ ժամանակ հայկական կողմը մոտ 40 մլն դոլարով ձեռք էր բերել չորս Swathi ռադարներ: 2022 թվականի հոկտեմբերի 18-ին Հնդկաստան աշխատանքային այցի շրջանակում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպեց Հնդկաստանի պաշտպանության նախարար Շրի Ռաջնաթ Սինգհի հետ[16], որի ընթացքում քննարկվեցին համագործակցության ընդլայնման հնարավորությունները, երկկողմ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մի շարք հարցեր:

---

15 https://economictimes.indiatimes.com/news/defence/arming-armenia-india-to-export-missiles-rockets-and-ammunition/articleshow/94518414.cms?fbclid=IwAR1VIC6igt1fpMsIt49U_gBMruLr32FSUEEDGUb5SWaiE3WT9eJI_U0aCXo

16 https://www.mil.am/hy/news/11119

2023 թվականի հունվարին հնդկական մամուլը կրկին սկսեց լուրեր[17] շրջանառել Հայաստանի հետ համագործակցության, մասնավորապես այն մասին, որ Հայաստանը դիտարկում է հնդկական միջին հեռահարության «երկիր-օդ» դասի հրթիռներ (MR_SAM) գնելու հավանականությունը: Ըստ IDRW (Indian Defence Research Wing) պորտալի՝ Հայաստանը թեև արդեն շահագործում է S-300PS մարտկոցներ, որոնք ունեն 150 կմ խոցման հեռահարություն, սակայն չունի որակյալ միջին մակարդակի «Երկիր-օդ» զենիթահրթիռային համակարգ:

Այնուամենայնիվ, ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2023 թվականի փետրվարի 27-ին հրապարակված տեղեկանքում[18] հայ-հնդկական զենքի և զինամթերքի մատակարարմանը որևէ անդրադարձ չկա, իսկ Կառավարությունը ո՛չ հերքում է, ո՛չ էլ հաստատում այդ լուրերը:

Բարեփոխումների ընթացքի մասին Կազմակերպության հրացմանն ի պատասխան ՀՀ ՊՆ-ն սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման առաջնահերթությանն անդրադառնալով նշում է, որ ՀՀ Անվտանգության խորհրդի որոշմամբ հաստատվել է ՍՌՏ (սպառազինության և ռազմական տեխնիկայի) զարգացման պետական ծրագիրը, և իրականացվում են աշխատանքներ վերջինիս կատարումն ապահովելու ուղղությամբ: Հարցին, թե արդյոք ձեռք բերված սպառազինությունը և ռազմական տեխնիկան բանակապես և որակապես համապատասխանում են պլանով նախատեսված գնումներին, ՀՀ պաշտպանությունը պատասխանել է, որ յուրաքանչյուր տարի գնահատվում են դրանց ձեռքբերման հնարավորություններն ու համապատասխանեցվում գնումների պլանին:

Դեռևս 2022 թ. սեպտեմբերի 29-ին կառավարության նիստի ժամանակ ՀՀ վարչապետը խոսելով Հայաստանի դաշնակից պետությունների մասին՝ ընդգծեց Ադրբեջանի հաջողությունները Հայաստանի դաշնակից երկրների հետ հարաբերություններում և հայտարարեց[19], որ եղել են դեպքեր, երբ Հայաստանի կողմից 100 միլիոնավոր դոլարներ վճարված են եղել զենքի և ռազմական տեխնիկայի գնման համար, սակայն Հայաստանի նկատմամբ մատակարարումների պարտավորությունները չեն կատարվել, այդ թվում՝ դաշնակից երկրների կողմից: Այդ ժամանակ վարչապետը չհստակեցրեց, թե ՀՀ որ դաշնակից պետության մասին է խոսքը: Հետագայում հայտնի դարձավ, որ խոսքը Ռուսաստանի մասին է:

2023 թ. մայիսի 22-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «Նովայա գազետա Եվրոպա» պարբերականին տված հարցազրույցում նշեց[20], որ նոր մեխանիզմներ և

[17] https://idrw.org/armenia-considering-indian-mr-sam-air-defence-system/#more-303757
[18] http://www.parliament.am/draft_docs8/K-522_zekuyc.pdf
[19] https://a1plus.am/hy/article/440847
[20] https://novayagazeta.eu/articles/2023/05/13/a-esli-voina-togda-voina

սպառազինության մատակարարումներ են անհրաժեշտ, քանի որ Հայաստանը չի ստանում այն, ինչ պատվիրել ու ինչի դիմաց վճարել է Ռուսաստանին: Նա նշեց, որ խնդիրը որևէ կերպ կապված չէ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած պատերազմով, քանի որ Ռուսաստանի կողմից իր պարտավորությունների չկատարումը սկսվել էր շատ ավելի վաղուց:

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ «հատուկ կարևորություն է տրվելու այս ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացմանը, մասնավորապես՝ ընդլայնվելու է Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը, որն առաջնահերթ ուղղվելու է համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»: Մինչդեռ հարկ է ընդգծել, որ հատկապես 2022 թվականի փետրվարին Ուկրաինայի դեմ ՌԴ-ի սանձազերծած ագրեսիայից հետո Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցության ուղղությամբ իրականացված որևէ քայլի մասին տեղեկությունները բացակայում են:

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի ու արդյունքների վերաբերյալ տեղեկանքում հայ-ռուսական հարաբերությունների մասին հիշատակվում է հիմնականում բարձրաստիճան պաշտոնյաների երկկողմ հանդիպումների համատեքստում: Ինչ վերաբերում է հայ-ռուսական ռազմական և անվտանգային ոլորտում համագործակցությանը, ապա այդ մասին կրկին հստակ տեղեկություններ չկան: Տեղեկանքում միայն նշվում է, որ «ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 5 մլրդ ԱՄՆ դոլար», մինչդեռ երկու երկրների միջև առևտրաշրջանառության համատեքստում չի նշվում ռազմական և ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությանն ուղղված կոնկրետ գործողությունների մասին:

Ներկայացնենք ՀՀ կառավարության **2021-2026** թթ. ծրագրի **2022** թվականի կատարման վերաբերյալ տեղեկանքում հայ-ռուսական համագործակցությանն ուղղված գործողությունները:

Այսպես, ըստ կառավարության՝

- 2022 թվականին ՀՀ-ն շարունակել է ընդլայնել համագործակցությունը ՌԴ-ի հետ քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգային և այլ ուղղություններով:
- Տեղի են ունեցել դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներ:
- 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահի 6 երկկողմ հանդիպում և 20 հեռախոսազրույց: ՀՀ վարչապետի և ՌԴ նախարարների խորհրդի նախագահ Միխայիլ Միշուստինի միջև 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել 3 երկկողմ հանդիպում

և 2 հեռախոսազրույց, 2023 թվականի սկզբին՝ ևս 1 հանդիպում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՌԴ իր պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ է ունեցել նաև ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի և ՌԴ Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի հետ: 2022 թվականի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է նաև Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին:

- 2022 թվականի սեպտեմբերի 19-ին Երևանում կայացել են «Հայ-ռուսական համագործակցություն. նոր մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով Հայ-ռուսական միջտարածաշրջանային ֆոռումի համաժողովը և Հայռուսական գործարար երկխոսությունը, ինչից հետո ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկն ստորագրել են ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2022-2025 թվականների տնտեսական համագործակցության ծրագիրը:
- 2022 թվականի դեկտեմբերի 22-23-ը երկու երկրների փոխվարչապետերի համանախագահությամբ Մոսկվայում կայացել է ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 21-րդ նիստը:
- Տեղի են ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի 8 հանդիպում և 10 հեռախոսազրույց:
- ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանն աշխատանքային այցեր են ունեցել ՌԴ:
- ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սերգեյ Նարիշկինը, թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցությունների նախարար Մաքսուդ Շադաևը, սպորտի նախարար Օլեգ Մատիցինը, տրանսպորտի նախարար Վիտալի Սավելևը, առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոն այց են կատարել ՀՀ:
- ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 5 մլրդ ԱՄՆ դոլար, 2021 թվականի շուրջ 2,6 մլրդ ԱՄՆ դոլարի համեմատ՝ գրանցելով 91,7%-ով աճ:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների և պաշտպանության բնագավառում հայ-ռուսական համագործակցության նպատակով հանդիպումներ ըստ հասանելի տեղեկությունների:

2022 թվականի օգոստոսի 14-ին Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնեց Ռուսաստանի Դաշնություն[21]:

Նույն աշխատանքային այցի շրջանակներում պատվիրակությունը օգոստոսի 15-ին այցելեց մերձմոսկովյան «Պատրիոտ» կենտրոն, որտեղ մասնակցեց «Միջազգային բանակային խաղեր 2022» մրցաշարի և «Բանակ 2022» ռազմարդյունաբերական ցուցահանդեսի բացման արարողություններին: Այցի ժամանակ Սուրեն Պապիկյանը ցուցահանդեսում ներկայացված ընկերությունների տաղավարներում շրջելով ծանոթացել ռազմարդյունաբերության մի շարք նորագույն նմուշների, հանդիպումներ ունեցել խոշոր ռազմարդյունաբերական ընկերությունների ղեկավարների հետ, քննարկել ռազմական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր[22]: Օգոստոսի 16-ին ՌԴ աշխատանքային այցի շրջանակում կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հանդիպումը ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ, երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները քննարկեցին տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր: Ըստ ՀՀ ՊՆ կողմի տարածված հաղորդագրության Սուրեն Պապիկյանը ներկայացրեց հայ-ադրբեջանական սահմանին, ինչպես նաև Արցախում վերջին շրջանում արձանագրված զարգացումները և նշեց, որ իրավիճակը շարունակում է լարված մնալ: Հաղորդագրությունում նաև նշվեց, որ կողմերը կարևորել են իրադրության հետևողական ու շարունակական կայունացման ուղղությամբ քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը, շեշտադրելով Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող ռուսական զորախմբի դերակատարությունն այդ հարցում: Հայաստանի և Ռուսաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները գոհունակություն հայտնեցին հայ-ռուսական ռազմական համագործակցության ներկա մակարդակի առնչությամբ և քննարկեցին փոխգործակցության հետագա խորացման ծրագրերն ու հնարավորությունները[23]:

2022 թվականի օգոստոսի 26-ին Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային այցի շրջանակում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը հանդիպեց ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովին: ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը Վալերի Գերասիմովին ներկայացրեց վերջին շրջանում հայ-ադրբեջանական սահմանին, ինչպես նաև Արցախում արձանագրված զարգացումները և այս պահին տիրող իրադրությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ռուսական ռազմական

[21] https://www.mil.am/hy/news/10931
[22] https://www.mil.am/hy/news/10936
[23] https://www.mil.am/hy/news/10942

համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Անդրադարձ է կատարվել ՀՀ զինված ուժերի արդիականացմանն ու բարեփոխումների ընթացքին[24]:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հեռախոսազրույց ունեցավ ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ: Հայաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարը ռուս գործընկերոջը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության ինֆինիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի հետևանքով ստեղծված իրադրությունը: Երկու երկրների պաշտպանության նախարարները պայմանավորվածություն ձեռք բերեցին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել իրադրության կայունացման ուղղությամբ[25]:

2022 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը հանդիպեց ՌԴ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-գնդապետ Ալեքսանդր Ֆոմինի հետ, քննարկվեցին երկկողմ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ընթացքը, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր[26]:

Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակում դեկտեմբերի 9-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մասնակցեց ՇՀԿ և ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների համատեղ հանդիպմանը, որտեղ ներկայացրեց ադրբեջանական վերջին ռազմական ագրեսիայի հետևանքով տարածաշրջանում ստեղծված իրադրությունը: Այնուհետև տեղի ունեցավ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի և ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին տարածաշրջանային անվտանգությանն առնչվող, ինչպես նաև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մի շարք ընթացիկ հարցեր: Հանդիպման ավարտին ստորագրվեցէ ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարությունների միջև ռազմական համագործակցության 2023 թ. ծրագիրը[27], որով հաստատվում է երկու երկրների սերտ համագործակցությունը ռազմական ոլորտում և առավել ամրապնդվում զինված ուժերի օպերատիվ կարողությունների և փոխգործունակության մակարդակը:

2023 թվականի փետրվարի 10-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում քննարկվեցին

[24] https://www.mil.am/hy/news/10969
[25] https://www.mil.am/hy/news/11015
[26] https://www.mil.am/hy/news/11148
[27] https://www.mil.am/hy/news/11229

տարածաշրջանային անվտանգությանը, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև պաշտպանական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր[28]:

2023 թվականի փետրվարի 28-ին աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը հանդիպեց ՌԴ պաշտպանության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ֆոմինի հետ: Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ համագործակցությանը, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր[29]:

2023թ. ապրիլի 28-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունեց Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի հրամանատար, գեներալ-գնդապետ Ալեքսանդր Լենցովին: Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, պաշտպանական հարցերով կցորդ, գնդապետ Իգոր Շչերբակովը և Լեռնային Ղարաբաղում ՌԴ խաղաղապահ ուժերի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Անդրեյ Վոլկովը: Կողմերը քննարկեցին Լեռնային Ղարաբաղի շուրջ և խաղաղապահ գործընթացի պատասխանատվության գոտում տիրող օպերատիվ իրավիճակն ու առկա խնդիրները, Լեռնային Ղարաբաղում իրականացվող ՌԴ խաղաղապահ առաքելության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք հարցեր: ՀՀ պաշտպանության նախարարը ընդգծեց 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության բոլոր կետերի անշեղ կատարման անհրաժեշտությունը և կարևորել Լաչինի միջանցքի շուտափույթ ապաշրջափակմանն ուղղված ջանքերի գործադրումը[30]:

Ընդհանուր առմամբ **2022** թվականի հուլիսից մինչև **2023** թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի զինվորական պաշտոնյաները աշխատանքային այցով առնվազն **5** անգամ մեկնել են ՌԴ, երկու երկրների պաշտպանության նախարարները ունեցել են առնվազն **2** հեռախոսազրույց: Համեմատելով Կազմակերպության կողմից **2021**[31] և **2022**[32] թվականներին հրապարակած տեղեկանքներում նշված այցերի քանակը **2023** թ. կատարված այցերի հետ, արձանագրում ենք ՀՀ զինվորական պաշտոնյաների այցերը ՌԴ կտրուկ տարբերվում են իրարից, մասնավորապես **2021** թվականի տեղեկանքում ՀՀ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաները կատարել են առնվազն **18** այց ՌԴ, **2022**-ին՝ **1** այց: ՌԴ պաշտպանության ոլորտի զինվորականները **2021** թվականին ՀՀ այցելել

[28] https://www.mil.am/hy/news/11295
[29] https://www.mil.am/hy/news/11339
[30] https://www.mil.am/hy/news/11432
[31] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/
[32] https://hcav.am/military-reforms-21/

են 10 անգամ, 2022 թվականին՝ 1 անգամ: Պաշտպանության նախարարության տարածած հրապարակային տվյալների համաձայն 2022 թվականի հուլիսից մինչև 2023 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում որևէ պաշտոնական այց չի կատարվել ՀՀ, բացի Արցախում/Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ առաքելության հրամանատարության այցերը, կամ նման մասնավոր այցերի մասին տեղեկությունները չեն հանրայնացվել: Փաստորեն ամենաշատ հանդիպումները եղել են 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, ապա 2022 թվականի սկզբին հանդիպումները կտրուկ նվազել են, ինչը կարող է պայմանավորված լինել թե՛ 2022 թվականին Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած ագրեսիայով, թե՛ Ռուսաստանի նկատմամբ Հայաստանում տիրող տրամադրություններով, որոնք մեծապես պայմանավորված են նաև ՀԱՊԿ պարտավորությունների շրջանակներում չտրամադրված աջակցությամբ՝ Հայաստանի դեմ Ադրբեջանի կողմից ագրեսիաների կանխարգելման նպատակով:

Հավաքական անվտանգության մասին Պայմանագրում առանձնահատուկ կարևորություն ունի վերջինիս 4-րդ հոդվածը, համաձայն որի՝ «եթե անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա անդամ պետությունների կողմից դա կհամարվի որպես ագրեսիա Հավաքական անվտանգության մասին պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ: Հետևաբար մասնակից պետությունները կտրամադրեն օժանդակություն որևէ մեկի դեմ ագրեսիայի ակտի ի հայտ գալու պարագայում: 2022-ի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիայի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը դիմեց ՀԱՊԿ-ին Պայմանագրի 4-րդ հոդվածի հիման վրա[33]: ՀԱՊԿ-ը իրադրությունը տեղում գնահատելու համար առաքելություն գործուղեց Հայաստան՝ հայտարարելով, որ ՀԱՊԿ-ը նախապատվությունը տալիս է քաղաքական-դիվանագիտական միջոցներին և ՀԱՊԿ-ի ներգրավմամբ ռազմական ուժի կիրառման մասին խոսք լինել չի կարող: Հոկտեմբերի 28-ին տեղի ունեցած Հավաքական անվտանգության խորհրդի նիստի ժամանակ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը միայան ընդգծեց սահմանների դելիմիտացիայի, տրանսպորտային ուղիների ապաշրջափակման կարևորությունը՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների կայուն կարգավորման հասնելու համար[34]: Այս ամենը զայրույթ առաջացրեց ու բողոքի ալիք բարձրացրեց հասարակության շրջանում: 2023 թ. սեպտեմբերի 17-ին մի խումբ քաղաքացիներ բողոքի ակցիա իրականացրեցին՝ պահանջելով ՀՀ կառավարությանը դադարեցնել ՀՀ անդամությունը ՀԱՊԿ-ից[35]:

[33] https://seco.am/security_council/sessions/96?lang=hy
[34] http://kremlin.ru/events/president/news/69700/videos
[35] https://hetq.am/hy/article/1https://www.azatutyun.am/a/32414320.html48401

2022 թվականի նոյեմբերի 23-ին Երևանում կայացած ՀԱՊԿ խորհրդի նիստի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ ՀԱՊԿ անդամ պետությունը երկու տարվա մեջ առնվազն 3 անգամ հարձակման է ենթարկվել Ադրբեջանի կողմից, սակայն Հայաստանը փաստացի որևէ արձագանք չի ստացել ՀԱՊԿ-ից, ինչը ըստ Փաշինյանի, կարելի է համարել ՀԱՊԿ-ի ամենամեծ անհաջողությունը:

Այս ամենից հետո առավել քան կանխատեսելի էր Հայաստանի կողմից ՀԱՊԿ անդամակցությունից հրաժարվելու խոսակցությունները, սակայն մինչ այս պահը որևէ տեղեկություն ՀՀ-ի՝ ՀԱՊԿ անդամակցության դադարեցման մասին հայտնի չէ: Ավելին, 2023 թվականի մայիսի 16-ին ՀՀ փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը լրագրողների հետ զրույցում հայտարարեց, որ Հայաստանի օրակարգում ՀԱՊԿ-ից դուրս գալու հարց այս պահին չկա՝ չբացառելով, որ իրավիճակով պայմանավորված հարցը էլի կարող է մտնել օրակարգ[36]:

Ակնհայտ է, որ ՀԱՊԿ-ին անդամակցությունը որևէ կերպ չի զսպում Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները, թերևս հարց է առաջանում՝ ինչու Հայաստանը վերջնականապես չի հրաժարվում անդամությունից այդ կառույցին:

Հայաստան-ՆԱՏՕ

2021-2026 թթ. ՀՀ Կառավարության ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2023 թվականի փետրվարին 27-ին հրապարակված տեղեկանքի համաձայն՝ հաստատվել է ՀՀ-ՆԱՏՕ Պլանավորման և վերանայման փաստաթուղթը՝ համագործակցության նպատակով, որը հնարավորություններ է ստեղծել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով համագործակցության զարգացման համար:

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները ունեցել են 6 հանդիպում ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության շրջանակներում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թվականի սեպտեմբերի 22-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակում, հանդիպում է ունեցել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

[36] https://www.azatutyun.am/a/32414320.html

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը 2022 թվականի մարտի 17-ին հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի առաջին տեղակալ Միրչա Ջոանայի և 2023 թվականի մարտի 17-ին՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

2022 թվականի հոկտեմբերի 3-ին Բրյուսելում ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է ՆԱՏՕ-ում անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների տեղակալների կոմիտեի (DPRC) անդամների հետ:

2022 թվականի մայիսի 15-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում մասնակցել Մշտական ներկայացուցիչների տեղակալների կոմիտե+Հայաստան (DPRC+Armenia) ձևաչափով հանդիպմանը:

2022 թվականի մայիսի 19-ից 21-ը ՀՀ ԱԺ պատվիրակությունը մասնակցել է Լյուքսեմբուրգում ՆԱՏՕ ԽՎ գարնանային նստաշրջանին:

2022 թվականի մայիսի 23-ին Հայաստան է ժամանել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինա Պիրիզը: Քննարկել են Հարավային Կովկասում անվտանգությանը և կայունությանը վերաբերող հարցեր: Արարատ Միրզոյանը ներկայացրել է Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցային գործընթացում վերջին քննարկումները, հիմնական հարցերի շուրջ հայկական կողմի տեսլականը: Նախարար Միրզոյանը շեշտել է Ադրբեջանի կողմից ագրեսիվ քաղաքականությունից ու սադրիչ գործողություններից հրաժարվելու անհրաժեշտությունը, ինչը կարևոր գործոն է բանակցություններում առաջընթացի ուղղությամբ: Ընդգծվել է տարածաշրջանում կայունությամբ շահագրգռված դերակատարների կողմից գործուն քայլերի կարևորությունը»,- ասված է հաղորդագրությունում:

Ի դեպ, 2023 թվականի փետրվարի 14-ին Կազմակերպությունը գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը 2017 թ. հաստատված Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների 2017-2019 թթ. ծրագրի տեքստի պատճենը ստանալու համար: Փետրվարի 20-ին պատասխան նամակով ԱԳՆ-ն Կազմակերպությանը հայտնել է, որ ըստ ՆԱՏՕ-ում գործող աշխատակարգի ծրագիրը հանդիսանում է սահմանափակ հասանելության ծառայողական փաստաթուղթ և հասանելի է միայն ծրագրում ներառված ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին: Հետաքրքիր է այն փաստը, որ Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների 2014-2016 թթ. ծրագրի տեքստը հասանելի էր և հրապարակված[37]:

[37] https://safesoldiers.am/wp-content/uploads/2016/03/ipap_Arm_14_16.pdf

2022 թվականի հուլիսից 2023 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել առնվազն 9 հանդիպում[38] :

Համեմատելով 2021 և 2022 թվականներին Հայաստան-ՆԱՏՕ հանդիպումների հաճախականությունը, կարելի է արձանագրել, որ այժմ հանդիպումներն ու քննարկումներն ավելի ինտենսիվ են, քան՝ նախկինում:

Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունները անվտանգային բնագավառում

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հրապարակված զեկույցում[39] նշվում է, որ ՀՀ-ԵՄ քաղաքական երկխոսությունը էականորեն խորացել է, այդ թվում՝ տարածաշրջանային անվտանգության հարցերով:

Շարունակվել են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների իրականացումը և այդ գործընթացի համակարգումը՝ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի նախագահությամբ գործող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

2022 թվականի հոկտեմբերին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին, որին մասնակցում էին չորս տասնյակից ավելի պետությունների առաջնորդներ՝ ԵՄ անդամ, ինչպես նաև ԵՄ գործընկեր երկրների ղեկավարներ:

2022 թվականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հինգ հանդիպում և հինգ հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

2023 թվականի փետրվարի 17-ին Մյունխենում տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լյաենի հանդիպումը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին հանդիպեցին Պրահայում՝ Ֆրանսիայի Հանրապետության

[38] https://www.mfa.am/hy/international-organisations/3
[39] https://www.gov.am/files/docs/5274.pdf

նախագահի և Եվրոպական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի» առաջին հանդիպման շրջանակներում:

Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991թ. Ալմա-Աթայի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Երկու երկրները հաստատեցին, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար, և որ այդ հանձնաժողովների հաջորդ նիստը կկայանա Բրյուսելում, մինչև 2022 թ. հոկտեմբերի վերջ:

Հայաստանն իր համաձայնությունը հայտնեց՝ աջակցելու ԵՄ քաղաքացիական առաքելությանը Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով, իսկ Ադրբեջանը համաձայնեց համագործակցել նշյալ առաքելության հետ «այնքանով, որքանով որ առնչություն կունենա»: Նախատեսված էր, որ առաքելությունն իր աշխատանքները կսկսի հոկտեմբերին, առավելագույնը երկու ամիս ժամկետով: Առաքելության նպատակը պետք է լիներ վստահության կառուցումը և իր զեկույցների միջոցով սահմանային հանձնաժողովներին աջակցելը[40]: 2022 թվականի հոկտեմբերի 20-ից, ինչպես նախատեսված էր, ԵՄ դիտորդական առաքելությունը Հայաստանում սկսեց իր գործունեությունը: ԵՄ 40 քաղաքացիական դիտորդ-փորձագետներից բաղկացած հայաստանյան առաքելությունը տեղակայվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանի երկայնքով: Նրանք դիտարկում են Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակը, ռազմական դիրքերի և կառուցում կանոնավոր և իրավիճակային զեկուցումներ հրադադարի վերաբերյալ զարգացումների առնչությամբ[41]: Դիտորդներն իրենց առաքելությունն ավարտեցին դեկտեմբերի 19-ին:

2023 թվականի հունվարի 23-ին ԵՄ խորհուրդը համաձայնություն տվեց Հայաստանի տարածքում քաղաքացիական առաքելության (EUMA) ստեղծմանը արդեն Ընդհանուր Անվտանգության և Պաշտպանության Քաղաքականության (CSDP) շրջանակներում: Առաքելության նպատակն է նպաստել Հայաստանի սահմանամերձ շրջաններում կայունության հաստատմանը, վստահության ամրապնդմանն ու այնպիսի մթնոլորտի ձևավորմանը, որ կաջակցի Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման՝ ԵՄ կողմից գործադրվող ջանքերին[42]: Հաղորդագրության մեջ նշվում է. «Արձագանքելով Հայաստանի պահանջին՝ քաղաքացիական առաքելությունը կանոնավոր հիմունքների վրա պարբերություն կիրականացնի՝ տեղեկություններ հաղորդելով իրավիճակի մասին, ինչը կմեծացնի ԵՄ իրազեկման մակարդակը: Առաքելությունը նաև կաջակցի ԵՄ խորհրդի նախագահ Շարլ Միշելի հովանու ներքո ընթացող բանակցային գործընթացին»[43]:

---

[40] https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/07/Nikol-Pashinyan-Announcement/

[41] https://euneighbourseast.eu/hy/news/latest-news/hayastanum-em-ditordakan-arraqelutyuny-sksel-e-gorcuneutyuny/

[42] https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/01/23/armenia-eu-sets-up-a-civilian-mission-to-ensure-security-in-conflict-affected-and-border-areas/

[43] https://www.azatutyun.am/a/32235772.html

2023 թվականի ապրիլի 11-ին Տեղ գյուղի դաշտերում տեղի ունեցած միջադեպը[44], երբ Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները կրակ բացեցին համայնքի հատվածում ինժեներական աշխատանքներ իրականացնող հայկական Զինված ուժերի զինծառայողների ուղղությամբ, առիթ դարձավ, որպեսզի կասկածի տակ դրվի ԵՄ դիտորդական առաքելության իրականացման արդյունավետությունը, վերջինս, իհարկե շահեկան էր թե՛ Ադրբեջանի, թե այն երկրների համար, որոնք, չնայած ոչ ակնհայտորեն, բայց դեմ են ԵՄ դիտորդական առաքելության տեղակայմանը ՀՀ:

Ի դեպ, ԵՄ-ն քաղաքացիական դիտորդական առաքելություն Վրաստանում սկսել է իրականացնել դեռևս 2008 թ՝ Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ ագրեսիայից հետո՝ բաժանարար գծի երկայնքով: Ռուսաստանի իշխանությունները, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնահռչակ հանրապետությունները շարունակում են մերժել դիտորդների մուտքը իրենց վերահսկողության ներքո գտնվող տարածք:

2022 թվականին Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած ագրեսիային ԵՄ պատասխանը ամիջապես ու վճռական եղավ: ԵՄ ղեկավարությունը դատապարտեց ռուսական ագրեսիան և միջազգային իրավունքի խախտումը՝ պահանջ ներկայացնելով Ռուսաստանին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, ինչպես նաև դուրս բերել բոլոր ուժերն ու զինվորական տեխնիկան: Պատմության մեջ առաջին անգամ ԵՄ-ն ֆինանսավորում է սպառազինության և այլ միջոցների գնումն ու առաքումը հարձակման ենթարկված երկիր: Ռուսական ագրեսիայի սկսվելուց ի վեր ԵՄ-ն և նրա ֆինանսական հաստատությունները մոբիլիզացրել են 37.8 միլիարդ եվրո՝ աջակցելու Ուկրաինայի ընդհանուր տնտեսական, սոցիալական և ֆինանսական կայունությանը մակրոֆինանսական օգնության, բյուջետային աջակցության, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում օգնության, ճգնաժամերին արձագանքման և մարդասիրական օգնության տեսքով[45]:

Այսպիսով, թեև վերջին շրջանում խորացել է նաև քաղաքական երկխոսությունը ԵՄ-ի և Հայաստանի Հանրապետության միջև, հատկապես տարածաշրջանային անվտանգային հարցերով, Ռուսաստանի Դաշնությունը ակնհայտորեն չի ողջունում նման երկխոսությունները, քանի որ ցանկանում է տարածաշրջանում պահպանել իր որոշիչ դերակատարումը:

Կրկին արձանագրում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որպես ռազմավարական դաշնակից դիտարկելով Ռուսաստանի Դաշնությանը, դրսևորում է ոչ հստակ մոտեցում այն հարցում, թե վերջապես Հայաստանը իր անվտանգային խնդիրների լուծման նպատակով որ կառույցների ու պետությունների հետ է պատրաստվում շարունակել համագործակցությունը, քանի որ

---

44 https://www.azatutyun.am/a/32358998.html

45 https://euneighbourseast.eu/hy/news/explainers/inchpes-e-em-n-ajakcum-owkrainayin-patzhamijocneric-minchew-rrazmakan-ew-humanitar-ognutyun/

ակնհայտ է, որ անհնար է ամուր և վստահելի դաշնակցային հարաբերություններ ստեղծել միաժամանակ Եվրոպական Միության և Ռուսաստանի Դաշնության հետ, քանի որ վերջիններս ունեն միմյանցից էապես տարբերվող մոտեցում ժողովրդավարության և իրավունքի գերակայության գաղափարների շուրջ՝ Ուկրաինայի դեմ ՌԴ-ի սանձազերծած պատերազմի և ԵՄ-ի կողմից ՌԴ-ի հանդեպ կիրառված պատժամիջոցների քաղաքականության պայմաններում: Հայաստանի Հանրապետությունն այժմ առավել, քան երբևէ պիտի ձգտի այնպիսի ռազմավարական համագործակցություններ ձևավորել, որ կարողանա արդյունավետ կերպով կանխել իր նկատմամբ ագրեսիան:

Այսպիսով, ամփոփելով սույն առաջնահերթությամբ նախատեսվող գործողությունները, արձանագրում ենք, որ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման խթանմանն ուղղված գործողությունների մասին միայն որոշ տեղեկություններ են հայտնի, սակայն համակարգային և ռազմավարական լուծումների մասին խոսելը վաղ է:

Ինչ վերաբերում է սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացին, ապա ակնհայտ է, որ դաշնակից և գործընկեր պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներում իրականացվող քաղաքականությունը արդյունավետ չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաշնակցից սպասվող սպառազինությունը, որի համար արդեն վճարված էր, չի մատակարարվել Հայաստանի Հանրապետությանը:

Առաջնահերթություն 5

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով «կյանքի են կոչվելու տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերը: Ներգրավված ուժերի և տեխնիկական նոր լուծումների միջոցով կատարելագործվելու է ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգը»:

2022 թ. հուլիսին «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով լրացում կատարվեց զորահավաքային զորակոչի ենթակա անձանց ցանկում, մասնավորապես՝ բացի ՀՀ

կառավարության սահմանած կարգով ամրագրված, առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված, չորս և ավելի երեխա ունեցող բաղաքացիներից և ՀՀ ԱԺ պատգամավորներից, զորահավաքային զորակոչի այժմ ենթակա չեն նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող) ունեցող բաղաքացիները, այն բաղաքացիները, ովքեր ունեն երեխա, որին խնամում է միայնակ, խնամքի տակ մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր ունեցող բաղաքացիները, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ:

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով ՀՀ կառավարության կողմից կատարված փոփոխությունների շրջանակներում ՀՀ-ում սկսեցին առավել հաճախակի պարբերականությամբ վարժական հավաքներ անցկացնել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո:

2021 թ անցկացվեց 2 վարժական հավաք՝ մեկամսյա և եռամսյա:

Վարժական հավաքների հաճախականությունը աճեց 2022 թ-ից: Մասնավորապես, 2022 թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հայտարարվեցին վեց վարժական հավաքներ[46]:

Նկատենք, որ հենց 2022 թվականից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկսեց առավել հաճախ ահազանգեր ստանալ պահեստազորում հաշվառված անձանցից:

Քաղաքացիներն իրենց ահազանգերով բարձրացնում են մի շարք խնդիրներ. մասնավորապես, հավաքներին մասնակցելու մասին ծանուցման ժամկետներին, բժշկական հետազոտությունների ոչ պատշաճ իրականացմանը, ընտանեկան պայմաններից ելնելով հավաքներին անձանց ներգրավելու հիմնավորվածությանը և այլն:

2022 թ. վարժական հավաքներին կանչվող պահեստազորում հաշվառված քաղաքացիների խնդիրները ներկայացնենք առավել մանրամասն.

- չեն իրականացվում օրենքով սահմանված բժշկական հետազոտություններ և փորձաքննություններ,
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումներում բացակայում են քաղաքացիների կողմից իրենց առողջության վիճակի վերաբերյալ նախկինում ներկայացված փաստաթղթերը,

[46] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159525 , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160890, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160867, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164587, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167833, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168906

2022 թ. առկա խնդիրների մի մասը լուծվեց 2023 թվականի վարժական հավաքների ժամանակ: Մասնավորապես՝ 2022 թ-ից ընթացքում վարժական հավաքներին ներգրավվելու մասին ծանուցագրերը քաղաքացիներին տրամադրվում էր օրենքի խախտմամբ՝ չպահպանելով առնվազն 20 օր շուտ ծանուցման համար սահմանված ժամկետը: Արդյունքում քաղաքացիները ծանուցվում էին հավաքներին մասնակցելու մասին հավաքների անցկացման վայր մեկնելու օրը: Մինչդեռ 2023 թ-ից սկսած նշված խնդիրը կարգավորվեց: Նշենք, որ մինչ խնդրի կարգավորումը Կազմակերպությունը բազմիցս բարձրաձայնել էր դրա մասին[47]:

2022 թ. հոկտեմբերի 13-ին՝ ՀՀ կառավարության նիստի ժամանակ, ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ եռամսյա վարժական հավաքների իրականացման փոխարեն այսուհետ կիրականացնեն 25-օրյա վարժական հավաքներ, որը պարտադիր կլինի Հայաստանի Հանրապետության բոլոր զինապարտ քաղաքացիների համար:

Նույն նիստի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադառնալով նախկինում իրականացված եռամսյա վարժական հավաքների պրակտիկային, հայտնեց, որ դրանք շատ երկարատև էին, իսկ նախկինում կազմակերպված վարժական հավաքների անարդյունավետությունը երևաց 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ[48]: ՀՀ վարչապետը նաև հավելեց, որ նախկինում եռամսյա վարժական հավաքներին կանչվում էին միայն աշխատանք չունեցող քաղաքացիները, քանի որ աշխատանք ունեցողների համար եռամսյա ժամկետը բավական երկար էր: Միաժամանակ զբաղվածություն չունեցող քաղաքացիներին ներգրավելով, ըստ վարչապետի, լուծվում էր սոցիալական խնդիր, քանի որ եռամսյա հավաքի մասնակիցները վճարվում են: Միաժամանակ, ըստ վարչապետի, վարժական հավաքների անցկացման նման մոտեցումը արդյունավետ չէր, և որոշվեց այն դարձնել 25-օրյա և պարտադիր բոլորի համար:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մանրամասնեց, որ հիմնական ծառայությունը 21 օր է՝ 7 օր պատրաստություն, 14 օր՝ մարտական հերթապահություն, սակայն նշվում է 25 օր՝ կազմակերպական գործողությունների համար նախատեսված աշխատանքների իրականացման համար:

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարը կառավարության նիստի ժամանակի հայտնեց, որ քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվելու ընտրելու առավել հարմար ժամկետը, երբ նրանք կարող են մասնակցել վարժական հավաքներին:

Հարկ է նշել, որ որևէ իրավական ակտով չի կարգավորվում քաղաքացու կողմից վարժական հավաքների ժամկետների ընտրության հարցը: Կազմակերպությանը դիմած քաղաքացիները հայտնում են,

[47] https://hcav.am/varjakan-havaqner/
[48] https://www.youtube.com/watch?v=A3MyeartyMc

որ իրենք ոչ թե ընտրում են տարվա մեջ իրենց հարմար ժամանակահատվածը վարժական հավաքներին մասնակցելու համար, այլ իրենց առաջարկվում է մեկ-երկու տարբերակ, որից իրենք պարտավոր են ընտրել: Փաստացի ունենք խնդրահարույց իրավիճակ, երբ անձը կարող է կանչվել վարժական հավաքների այն ժամանակ, որով կարող է խոչընդոտվել նրա աշխատանքների կամ տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպմանը:

2023 թ. վարժական հավաքների ընթացքում և նույնիսկ դրանից առաջ Կազմակերպություն էին դիմում պահեստազորում հաշվառված քաղաքացիներ, ովքեր՝ հայտնում էին մի շարք խնդիրների մասին, որոնց առնչվել են վարժական հավաքների շրջանակներում:

Այսպես, 2022 թ. արձանագրված խնդիրներին[49] ավելացան են նաև նոր խնդիրներ 2023 թ վարժական հավաքների կազմակերպման ժամանակ:

Մասնավորապես՝

- պահեստազորայինները վարժական հավաքներին ներգրավվելու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (ԶԶՀԾ) տարածքային ստորաբաժանումներ ներկայանալու մասին ծանուցվում են ոչ թե փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման եղանակով, այլ հեռախոսազանգով, որոշ դեպքերում նաև ոչ անմիջապես, այլ իրենց հարազատների միջոցով:
- 2023 թ. կազմակերպվող վարժական հավաքներին մասնակցելու համար ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումներ են կանչվում պահեստազորում հաշվառված անձինք, ովքեր մասնակցել և արձակվել են եռամսյա վարժական հավաքներից 2022 թվականին, այսինքն՝ երկու կամ երեք ամիս առաջ, մինչդեռ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ « ...պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել ... ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում»:
- 2023 թ. փետրվար ամսին քաղաքացիներին ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներում հայտնել են 2023 թ. հուլիսին կայանալիք վարժական հավաքներին մասնակցելու նրանց պարտավորության մասին, այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածի համար վարժական հավաքներ պաշտոնապես հայտարարված չեն: Այսինքն՝ քաղաքացիները տեղեկացված չեն վարժական հավաքների յուրաքանչյուր փուլի անցկացման ժամանակացույցի մասին, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարել էր, որ 2023 թ-ից նախատեսվող

[49] https://hcav.am/military-reforms-21/

վարժական հավանիֆներին քաղաքացին ինքն է ընտրելու հավաքներին մասնակցելու ժամանակահատվածը:

- Հանձնաժողովներում պահեստազորայինների բժշկական հետազոտությունն իրականացվում է միայն բանավոր՝ հակիրճ հարց ու պատասխանի միջոցով, և դրա արդյունքում անձինք ճանաչվում են պիտանի վարժական հավաքների մասնակցելու համար և նրանց տրամադրում են ծանուցագրեր վարժական հավաքների մեկնելու մասին՝ առանց անհրաժեշտ և պարտադիր բժշկական հետազոտություններ իրականացնելու:
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումներում քաղաքացիներին բուժզննությունների ներկայանալու վերաբերյալ կարգագիր տրամադրելիս, նրանց հորդորում են հնարավորինս շուտ անցնել բժշկական հետազոտություններ՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ քաղաքացուն նախատեսում են ներգրավել վարժական հավաքներին շուրջ վեց ամիս անց: Վարժական հավաքների կանչվելուց վեց ամիս առաջ կատարված առողջական վիճակի հետազոտությունները կարող են բավարար չափով օբյեկտիվ չլինել, հատկապես որոշ սեզոնային հիվանդությունների դեպքում, որոնք դրսևորվում են միայն որոշակի եղանակային պայմաններում: Բացի այդ, վեց ամիսը բավական երկար ժամանակահատված է, որի ընթացքում անձի առողջական վիճակում կարող են տեղի ունենալ էական փոփոխություններ:
- Ներկայումս Կառավարությունը փորձում է կարգավորել վարժական հավաքների կանչվող քաղաքացիների ոչ միայն աշխատատեղի, այլ նաև աշխատավարձի պահպանման հետ կապված հարցերը՝ գործատուին առաջարկելով յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողին վճարել հիմնական աշխատավարձի և որպես զինծառայողի հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը: Մինչդեռ հստակ չէ, թե ինչպես պետք է կարգավորվի, օրինակ, անհատ ձեռներեց հանդիսացող պահեստազորում հաշվառված անձի աշխատավարձի խնդիրը այն դեպքում, երբ վերջինս իր բացակայության ընթացքում եկամուտ չի ունենալու, ինչը հանգեցնելու է նրա և նրա ընտանիքի ֆինանսական վիճակի վատթարացմանը, հատկապես այն դեպքերում, երբ անձն ունի վարկային պարտավորություններ և շատ ավելի բարձր ամսական եկամուտ, քան սահմանված է ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» որոշմամբ՝ որպես նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ:

Այսպիսով, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման շրջանակներում իրականացվող վարժական հավաքների կազմակերպման և անցկացման ընթացքում առկա են բազմաթիվ խնդիրներ:

Անդրադառնալով 2021 և 2022 թվականների ընթացքում զինված ուժերում պահեստազորայինների մահվան դեպքերին, նշենք, որ Կազմակերպության կողմից հրապարակված ՀՀ և ԱՀ /ԼՂ/ զինված ուժերում մահացության դեպքերի մասին 2021[50] և 2022 թվականների[51] տեղեկանքներում արձանագրել ենք պահեստազորայինների մահվան համապատասխանաբար 4 և 5 դեպք:

2021 թ. մահացած պահեստազորայիններից մեկը զորահավաքային զորակոչի միջոցով ծառայություն անցնող զինծառայող է եղել, ով վիրավորվել է 2020 թ-ի հոկտեմբերին և մահացել 2021 թ-ին: Եվս երկու պահեստազորային զինծառայողներ մահացել են 2021 թ-ի սեպտեմբերին՝ ՀՀ կառավարության որոշմամբ հայտարարված պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքների ընթացում՝ ծառայակցի կողմից մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտման հետևանքով: Մյուս պահեստազորայինը հանդիսացել է պահեստազորի սպա, ով մահացել է դժբախտ պատահարի հետևանքով՝ մեքենան նորոգելիս:

2022 թվականին 5 պահեստազորայինների մահվան պատճառներն են՝ ինքնասպանությունը (1 դեպք), առողջական խնդիրներ (1 դեպք), դժբախտ պատահար (1 դեպք), սպանություն (1 դեպք), ավտովթար (1 դեպք):

Անդրադառնանք պահեստազորայինների մահվան որոշ դեպքերի հանգամանքներին: ՀՀ գլխավոր դատախազությունից Կազմակերպությանը հայտնել են, որ ինքնասպանություն գործած պահեստազորայինը 2022 թ. մայիսի 20-ին «փսիխոտիկ խանգարում» ախտորոշմամբ ընդունվել է հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, հունիսի 1-ին «Ալկոհոլային էնցեֆալոպաթիա» ախտորոշմամբ տեղափոխվել ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոն և հունիսի 9-ին ինքնասպանություն է գործել՝ ցած նետվելով նույն կլինիկայի երրորդ հարկից:

2022 թ. հոկտեմբերի 29-ին, ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ մարտական դիրքում պահեստազորայինները վիճաբանել էին, ինչի արդյունքում նրանցից մեկը կրակել է մյուսին՝ մահացու վնասվածք հասցնելով գլխի հատվածում, ապա՝ կատարել է ինքնավնասում՝ կրակելով ինքն իր ոտին:

---

50 https://hcav.am/wp-content/uploads/2022/02/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-2021-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%A5%D6%80.pdf

51 https://hcav.am/wp-content/uploads/2023/01/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-2022-%D5%80%D5%94%D4%B1%D5%8E-1.pdf

2022 թ. օգոստոսին արձանագրվեց վարժական հավաքների երկու զինծառայողի մահվան դեպք: Մեկ զինծառայող հանկարծամահ եղավ ճնած ժամանակ, մյուսը ջրահեղձ եղավ Սևանա լճում:

Խիստ անհանգստացնող են վարժական հավաքների ժամանակ պահեստազորայինների սպանության, ինքնասպանության, մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով մահվան դեպքերը, նման դեպքերի առկայությունը կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի պահեստազորում հաշվառված անձինք չցանկանան մասնակցել վարժական հավաքներին: Բացի այդ, որոշ պահեստազորայիններ շատ երկար ժամանակ առնչություն չեն ունեցել ծառայության ժամանակ իրենց կցագրված զենքի կամ զինտեխնիկայի հետ, ենթադրվում է, որ 25-օրյա վարժական հավաքների ընթացքում պահեստազորայինները ընդամենը մեկ շաբաթում պիտի անցնեն համապատասխան պատրաստվածություն, ապա իրականացնեն մարտական հերթապահություն: Ինչ վերաբերում է առողջական խնդիրներով պայմանավորված մահվան դեպքերին, ապա սա փաստում է, որ մինչ պահեստազորայինների վարժական հավաքներին մասնակցությունը պետք է համապարփակ բժշկական հետազոտություններ անցկացվեն, ինչը թույլ կտա նվազեցնել նման դեպքերի քանակը:

Ինչ վերաբերում է տարածքային պաշտպանության համակարգի ներդրմանը, 2023 թ. մայիսի 3-ին ՀՀ ԱԺ-ում կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարը հայտարարեց[52], որ ՊՆ-ն վերջերս մշակել է Տարածքային պաշտպանության և տեղական պաշտպանության մասին նոր հայեցակարգ, որից բխելու են նաև նոր իրավական ակտեր, որոնք առաջիկայում կքննարկվեն ԱԺ-ում:

Ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերի իրականացման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարը միաժամանակ հայտնեց, որ նոր պատրաստվածության մեջ ներգրավվելու են նաև այն անձինք, ովքեր որոշ պատճառներով ազատվել են զինվորական ծառայությունից: Նշված մոտեցումը նախարարի կողմից հիմնավորվում է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարությունն ամեն ինչ անում է, որ պահեստազորը վարժական հավաքների միջոցով պատրաստվի, ինտեգրվի, տեղայնացվի այն հատվածներին, որտեղ անհրաժեշտության դեպքում պետք իրականացնի երկրի պաշտպանությունը՝ երկրի տարածքային ամբողջականությունը պաշտպանելիս:

52 https://www.tert.am/am/news/2023/05/03/papikyan/3931563

Ամփոփելով սույն առաջնահերթության կատարումը, նշենք, որ տարածքային պաշտպանության մեխանիզմների հստակեցումը հույժ կարևոր քայլ է Հայաստանի Հանրապետության պաշտպանության և տարածքային ամբողջականության պահպանման տեսանկյունից:

Միաժամանակ, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման, տարածքային պաշտպանության համակարգի ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը պետք է բխեն պահեստազորում հաշվառված անձանց իրավունքներից: Այսինքն, այն մոտեցումը, որ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները ևս ներգրավվելու են աշխարհազորի հետ տարվող պատրաստություններում, արդարացված չէ պետության պաշտպանությանը անձանց պարտադիր և արդյունավետ մասնակցելու տեսանկյունից, եթե նշված անձինք պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են առողջական խնդիրների, ընտանեկան որոշակի պայմանների պատճառով, որոնք մինչ այժմ մնում են ակտուալ:

Հայտնի չէ նաև, թե արդյոք ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգի կատարելագործման համար տեխնիկական նոր լուծումներ ներդրվել են, թե ոչ, և ինչ նոր մեխանիզմներ են մշակված ակտիվ աշխարհազորի և պահեստազորի հետ անցկացվող պատրաստությունների անցկացման համար:

Թե՛ եռամսյա և թե՛ 25-օրյա վարժական հավաքների ժամանակ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ստացել է բազմաթիվ ահազանգեր, մասնավորապես, 2021 թվականին Կազմակերպությունը ստացել է ահազանգեր պահեստազորում հաշվառված 33 անձից, 2022 թվականին՝ 45, իսկ 2023 թվականի առաջին կիսամյակում Կազմակերպությանը դիմած պահեստազորայինները 51-ն են: Ենթադրվում էր, որ եռամսյա հավաքներից 25-օրյա ժանկետին անցումը պետք է նվազեցներ այն խնդիրները, որոնք կապված են վարժական հավաքներին մասնակցության ժամանակ պահեստազորայինների ընտանեկան կարգավիճակի, աշխատանքի և ֆինանսական խնդիրների, առողջական վիճակի հետ, սակայն համեմատելով 2021 թվականից ի վեր անցկացվող վարժական հավաքների հետ կապված խնդիրները, արձանագրում ենք, որ այնուամենայնիվ, խնդիրների բնույթը չի փոխվել, միևնույն ժամանակ այն գործողությունները, որոնք իրականացվել են նախորդ տարիներին անցկացվող վարժական հավաքների ժամանակ ի հայտ եկած խնդիրների վերացման կամ նվազեցման ուղղությամբ արդյունավետ չեն եղել:

Առաջնահերթություն 6

Ռազմական կրթության որակի էական բարձրացում:

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է, որ «ռազմական կրթության և գիտության զարգացումը լինելու է Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Վերանայվելու են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացները, որոնք համապատասխանեցվելու են Զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին: Ռազմական գործողությունների բնույթի կերպափոխման, տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի, տեղեկատվական ու հոգեբանական ազդեցությունների ավելացման պայմաններում ռազմական կրթությունը լինելու է ապագայամետ՝ նախապատրաստելով հնարավոր պատերազմներին պատրաստ արհեստավարժ զինվորականներ: Կառավարությունը հետամուտ է լինելու նաև ռազմական գիտության զարգացմանը, որի շրջանակներում վերանայվելու են պատերազմավարման հիմնադրույթները, մարտական գործողությունները պլանավորելու և վարելու ձևերը»:

2022 թվականի հուլիսի 21-ին ՀՀ կառավարության թիվ 1098-Ն որոշմամբ հաստատվեց ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության նոր կարգը: Բարձրագույն ռազմավարական կրթական ծրագրով ընդունելությանը (ընտրությանը) կարող են մասնակցել զորամիավորման հրամանատարի տեղակալի և միավորման հրամանատարի, ինչպես նաև դրանց հավասար պաշտոն զբաղեցնող, բարձրագույն ռազմական կրթության մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող մինչև 50 տարեկան սպայական կազմի զինծառայողները: Բարձրագույն ռազմավարական կրթական ծրագրով ընդունելությունը (ընտրությունը) իրականացվում է հարցազրույցի միջոցով: Մինչ այս փոփոխությունը տարիքային սահմանափակումը սահմանված էր մինչև 48 տարեկան:

Ըստ փոփոխության գումարտակի, դիվիզիոնի կամ էսկադրիլիայի հրամանատարի, ինչպես նաև դրանց հավասար պաշտոն զբաղեցնող՝ մինչև 40 տարեկան սպայական կազմի զինծառայողները կարող են մասնակցել բարձրագույն ռազմական կրթական ծրագրով ընդունելությանը, նախկինում ընդունելությանը կարող էին մասնակցել մինչև 37 տարեկան սպայական կազմի զինծառայողները[53]:

Կառավարության որոշմամբ սահմանվում են ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կրթական ծրագրերը, ընդունելության պայմանները, ընդունելության կազմակերպման ընթացակարգերը, մարմինները, չափորոշիչները և արդյունքների բողոքարկման կարգը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ ռազմաուսումնական հաստատությունների

[53] https://www.arlis.am/documentview.aspx?docid=166269

ընդունելության կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը: Նշված կարգը գործում է ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 525-Ն որոշմամբ, սակայն անհրաժեշտություն է առաջացել նորովի սահմանել Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում ուսանելու համար զինծառայողների ընտրության հետ կապված գործընթացը, հստակեցնել այն կրթական ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվում է ընդունելությունը, ընդունելության պայմանները և կազմակերպման կարգը:

ՀՀ կառավարության հնգամյա (2021 - 2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ Կազմակերպության գրությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ վերանայվել են օպերատիվ, մարտական, և զորահավաքային պատրաստության գործընթացները, մշակվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, զորահավաքային պատրաստության համար 25-օրյա պատրաստության ծրագիրը, ինչպես նաև ԶՈՒ զինծառայողների ատեստավորման հարցաշարերը և դրա շրջանակներում՝ գործնական վարժությունները»:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, իրականացվում են աշխատանքներ Զինված ուժերում «Արհեստավարժ սերժանտական համակարգի» ներդրման ուղղությամբ: Ինչպես նաև, Զինված ուժերում իրականացվել է նորագույն տեխնոլոգիաների և վարժասարքերի ներդրմամբ ուսումնանյութական բազայի զարգացում և կատարելագործում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հավելել է, որ բարեփոխումներն իրականացվում են բոլոր ոլորտներում՝ ռազմական կառավարման համակարգի, ԶՈՒ կազմկառուցվածքի, մարտական հերթապահության կատարելագործման, զորատեսակների կրակային հնարավորությունների և կարողությունների ավելացման, ռազմական ենթակառուցվածքի, զորքերի տեղակայման վայրերի և այլ ուղղությամբ: Սակայն տեղեկատվության գաղտնիության ապահովման նպատակով հավելյալ տեղեկություններ ներկայացնելը ՀՀ պաշտպանությունը համարել է ոչ նպատակահարմար:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ Ներքին գործերի, Կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունների, ԱԱԾ-ի հետ համատեղ աշխատանքներ են տարվում սպայական ավագ դպրոցի ստեղծման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

Ծրագրի մշակման աշխատանքներ են տարվում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի հրամանատարաշտաբային ֆակուլտետի ուսումնառությունը 2 տարի ժամկետով

իրականացնելու համար: Աշխատանքներ են տարվում նաև ռազմագիտական թեմումով դասախոսների ընտրության համար հստակ արժեքահեն մրցութային ճկուն ընթացակարգեր սահմանելու մասով:

2023 թ փետրվարի 2-ին Երևանի Մանկավարժական Համալսարանի և ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանների միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որով կողմերը պատրաստվում են համագործակցել ուսումնադաստիարակչական և գիտակրթական բնագավառներում, ամրապնդել ուսանողների (կուրսանտների) ուսումնական և ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումը, արդյունքում՝ վերապատրաստվեն դասախոսներ:

Այսպես, անդրադառնալով սույն առաջնահերթության կատարմանը, ճշեմք, որ ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացները վերանայվել են, ինչի արդյունքում մշակվել են ծրագրեր, մինչդեռ որքանով են դրանք համապատասխանեցվել Զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին, հայտնի չէ, քանի որ ոչ բոլոր դեպքերում են հայտնի առաջադրված խնդիրները:

Զկան տեղեկություններ այն մասին, թե որքանով է ապագայամետ ռազմական կրթությունը, քանի որ հայտնի չեն ռազմական կրթության հիմք հանդիսացող դրույթները: Արդյոք ռազմական կրթության հիմքում դրված են զինծառայողների մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ևս հստակ չէ:

Պատերազմավարման հիմնադրույթների, մարտական գործողությունների պլանավորման և վարելու ձևերի, կրթական ծրագրերի վերանայման մասին ևս տեղեկություններ չկան:

ՀՀ ՊՆ հավաստմամբ, իրականացվում են հստակ աշխատանքներ, որպեսզի ռազմական ուսումնական հաստատություններում սովորելը ապագա սպաների համար նաև գրավիչ լինի, որի համար նախատեսվում է հարստացնել ու զարգացնել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ենթակառուցվածքները:

Ի տարբերություն Զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Կազմակերպության հրապարակած նախորդ երկու տեղեկանքների, որոնցում հստակ արձանագրել էինք, որ դիտարկվող ժամանակահատվածներում չեն իրականացվել միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնել ռազմական կրթության որակը կամ որոնցով հնարավոր կլինի պարզել, թե ինչ գիտելիքներ ունեն զինված ուժերում ծառայության մեջ գտնվող սպաները, ապա այժմ առնվազն կարելի է խոսել զինծառայողների ատեստավորման միջոցով իրենց զբաղեցրած պաշտոններին նրանց գիտելիքների, կարողությունների համապատասխանության և բարեվարքության ստուգման աշխատանքների նախաձեռնման մասին:

Առաջնահերթություն 7

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում:

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ նախատեսվում է կատարելագործել օրենսդրական դաշտը՝ տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով:

Տվյալ առաջահերթության վերաբերյալ դիտարկվող ժամանակահատվածում որևէ տեղեկություն չի հրապարակվել, սակայն կրկին հղում կատարելով Կազմակերպության՝ ՀՀ կառավարության հնգամյա (2021 - 2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ գրության պատասխանին, նշենք, որ հարցին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխման և սույն խնդրի օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը պատասխանել է, որ ներկայացվել է առաջարկությունների փաթեթ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ու «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքները լրամշակելու վերաբերյալ: Մշակվել և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է «ՊՆ համակարգում տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» և «ԶՈՒ տեղեկատվական ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» հրամանները: ՀՀ ՊՆ նշում է նաև, որ առկա են տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման գործող մեխանիզմներ, որոնք, սակայն, հրապարակման ենթակա չեն:

Դեռևս 2021 թ. ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հայկ Զոբանյանը հայտարարել էր[54], որ նախատեսվում է ստեղծել կիբերզորքեր և այդ ուղղությամբ արդեն առաջին քայլերն են իրականացվում և որ հետագայում համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության հետ հնարավոր կլինի հաջողությամբ կատարել նաև մյուս քայլերն այդ ուղղությամբ:

Մինչ այժմ, սակայն, հայտնի չէ, թե արդյոք այլ քայլեր իրականացվել են ՀՀ-ում կիբերզորքերի ստեղծման ուղղությամբ, չնայած գործընթացի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունները

[54] https://www.azatutyun.am/a/31389827.html

կարող են պաշտպանված լինել որպես պետական գաղտնիք, այնուամենայնիվ դրանց ստեղծման փաստի մասին հանրությանը պետք է տեղեկացնել, քաղաքացիների հնարավոր մասնագիտական կողմնորոշմանն ու ներգրավմանը նպաստելու տեսանկյունից:

Հիշեցնենք, որ 2016 թվականից պաշտպանական համակարգում բարձր տեխնոլոգիական լուծումների ստեղծման, դրանց արդյունավետ կիրառման նպատակով Պաշտպանության նախարարությունը՝ «Հայտեք» կիբերանվտանգության կենտրոնի հետ համատեղ հայտարարող մրցույթների շրջանակներում ընդգրկում է զորակոչիկների՝ զինված ուժերի կարիքների համար տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու ընտրության նպատակով:

Տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտի զարգացման կարևորությունը Հայաստանում առավել արդիական դարձավ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո: Այնուամենայնիվ այս ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ հրապարակված տեղեկությունները շատ սուղ են, ուստի դժվար է պատկերացում կազմել, թե ինչ տեմպերով է զարգանում ոլորտը:

Տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտի զարգացման վերաբերյալ և առհասարակ այս առաջնահերթության վերաբերյալ իրազեկվածության մասին ինչպես նախորդ տեղեկանքներում ենք անդրադարձել, ևս շատ տեղեկություններ չունենք, և չենք կարող հստակ պատկերացում կազմել այս բնագավառում իրականացրած գործողությունների արդյունավետության մասին:

Առաջնահերթություն 8

Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ ենթադրվում է իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է «զարգացնել զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը»

Համաձայն ՀՀ ՊՆ ուղղված Կազմակերպության գրության պատասխանի՝ զինծառայողների հայրենասիրական դաստիարակությունը խթանելու, զինվորական ծառայության առաքելության գիտակցումն ապահովելու նպատակով կազմվել է «Հայրենիքի պաշտպանի ազգային գաղափարական դաստիարակության միջոցառումների ծրագիրը», որի շրջանակներում զորամասերի, ՏԻՄ-երի, ուսումնական հաստատությունների համագործակցությամբ իրականացվել են բազմաբովանդակ միջոցառումներ:

Նույն գրությամբ նաև տեղեկացվեց, որ Զինված ուժերում զինվորական հոգեբանների ինստիտուտի զարգացման և կատարելագործման նպատակով համագործակցության շրջանակներում օտարերկրյա գործընկեր պետություններում իրականացվում է ռազմական հոգեբանության մասնագիտացված կրթական ծրագրով զինծառայողների պատրաստություն:

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետի համապատասխան հրամաններով զորամասերի սպա-հոգեբանները լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով վերապատրաստումներ են անցնում Մոսկվայի և ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարաններում, ՀՀ հոգեկան առողջության առաջատար կենտրոններում:

Ինչ վերաբերում է Զինված ուժերում սպա-հոգեբանի ինստիտուտի զարգացմանը, ապա ըստ ՊՆ-ի՝ ուսումնասիրվում և փուլային կարգով զորամասում ներդրվում են սպա-հոգեբանների հաստիքներ (այդ թվում՝ ուսումնական գումարտակներում):

Ի դեպ, 2023 թ մարտի 13-ն ՀՀ Կառավարության նիստի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարը հայտարարեց, որ զորամասերին հատկացվել են հոգեբանական օգնության կետերի 23 լրակազմ նյութատեխնիկական միջոցներ[55]:

Ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը նվազեցնելու համար ձեռնարկված միջոցները թերևս անարդյունք են եղել 2022 թվականին, ինչի ապացույցն է ՀՀ Կառավարության հնգամյա (2021-2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջնահերթությունների կատարման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ հարցմանը պաշտպանության նախարարության տված պատասխանը, որում ՊՆ-ն նշում է, որ 2022 թվականի ընթացքում ոչ կանոնադրային փոխհարաբերությունների դրսևորման հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած զինծառայողների թվաքանակն աճել է 8%-ով: Կրկին վկայակոչելով նույն հարցման պատասխանը, նշենք, որ «Հայրենիքի պաշտպանության գործում միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի դրսևորման և հանդուրժողականության մթնոլորտի պահպանման

[55] https://www.1in.am/3242005.html

կարևորությունը» թեմայով զորամիավորումների և զորամասերի զինծառայողների շրջանում անցկացվել են պարապմունքներ:

Ոչ կանոնադրային փոխհարաբերությունների դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ ինչպես դեպքի հանգամանքները, այնպես էլ դրանց առաջացմանը նպաստող գործոնները , ծառայության կազմակերպման ու իրականացման գործընթացներում տեղ գտած թերություններն ու բացթողումները պարզելու համար: Նման միջադեպերը բացառելու կամ դրանց ի հայտ գալու հավանականությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին տրվել են կոնկրետ հանձնարարականներ, նախանշվել են կանխարգելիչ աշխատանքների ուղղություններ: Սպա-հոգեբանների ու գնդերեցների կողմից զինծառայողների շրջանում իրականացվել են բարոյախրատական թեմաներով զրույցներ, որպեսզի միմյանց հանդեպ ձևավորվի հարգանքի, հանդուրժողականության մթնոլորտ: Իսկ, թե ինչքանով է արդյունավետ գնդերեցների դերը ոչ կանոնադրային հարաբերությունների կանխման տեսակետից մինչ այժմ որևէ անդրադարձ չկա ՊՆ-ի կողմից:

Ինչ վերաբերում է բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների իրականացմանը, ապա ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ տեղեկատվական արդյունավետության բարձրացման համար զինված ուժերում նախապատրաստվել և յուրաքանչյուր ամիս զորամասեր են ուղարկվել տեղեկատվական թեմատիկ նյութեր, առավել ինտերակտիվ դարձնելու համար կիրառվում են տեխնիկական միջոցներ: Վերամշակվել, հրատարակվել ու զորամասեր է առաքվել «Գաղափարահիրավական պատրաստության և հասարակական-պետական պատրաստության ուսումնամեթոդական ծրագիր-ձեռնարկը»:

Բացի այդ, Պաշտպանության նախարարության հավաստմամբ, զինծառայողների մոտ բարոյական-մարտական հատկանիշներ ձևավորելու, գեղագիտական դաստիարակությունը խթանելու և մշակութային կյանքն աշխուժացնելու նպատակով կազմակերպվում է ՀՀ ԶՈՒ նկարիչ քանդակագործների համաբանակային մրցույթ: Կազմակերպվում են տասից ավելի մարզական առաջնություններ, որոնք հանդիսանում են ոչ միայն մարզման, այլև ժամանցի արդյունավետ կազմակերպման միջոց: ՀՀ ԶՈՒ զինծառայողները հնարավորություն են ստանում հաճախելու Բանակի կենտրոնական մարզական ակումբի տարբեր թմերի հանդիպումներին, ինչպես նաև ազգային հավաքականների և տարբեր միջազգային մարզական միջոցառումներին:

Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացման հարցը հույժ կարևոր է և նշված գործողությունների իրականացումն առնվազն այս պահին որևէ տեսանելի արդյունք չի գրանցել, ինչի հավաստումն են զինված ուժերում կատարվող հանցագործությունների մասին փաստերը,

մասնավորապես՝ նվազման միտում չունեցող մահվան դեպքերը, այդ թվում՝ ինքնասպանությունները, ոչ կանոնադրային հարաբերությունների մասին փաստերը: Հիշեցնենք նաև, որ զինված ուժերում դեռևս **2013** թվականից ներդրվել է սպա-հոգեբանների ինստիտուտը: Հոգեբանը պատասխանատու է զորամասում հոգեբանական աշխատանքների կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի և նրանց հոգեկան կայունության պահպանմանն ուղղված աշխատանքների համար, պետք է նաև մասնակցի ստորաբաժանումների և առանձին զինծառայողների հոգեբանական պատրաստության գործընթացին, զինծառայողների շրջանում իրականացնի հոգեբանական աջակցման աշխատանքներ, ի լրումն այլ գործառույթների, պետք է կատարի ուսումնասիրություններ ստորաբաժանումներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական գործընթացների և առանձին զինծառայողների վարքի կանխատեսումների վերաբերյալ[56], ցավոք, այս ինստիտուտը դեռևս արդյունավետ չի գործում, ինչի մասին են վկայում զինված ուժերում առկա քրեական հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները, զինված ուժերում ինքնասպանությունների կամ ինքնասպանության հասցնելու դեպքերը և ոչ կանոնադրային հարաբերությունների փաստերի մասին տեղեկությունները:

Ինչ վերաբերում է զինված ուժերում տեղեկատվական, մշակութային ու ժամանցային միջոցառումների իրականացմանը կամ իրականացվող միջոցառումների բնույթի բարելավմանը, ապա այս մասով ևս անհրաժեշտ է ունենալ հստակ միջոցառումներ ու ծրագրեր, քանի որ զինծառայողները համալրելով զինված ուժերը չպետք է մեկուսացվեն սոցիալական ու մշակութային կյանքից:

Առաջնահերթություն 9

Զինվորական ծառայության գրավչության բարձրացում՝ աշխատավարձային և սոցիալական երաշխիքների նոր քաղաքականության միջոցով

Սույն առաջնահերթության վերաբերյալ Կառավարության հնգամյա ծրագրում նշվում է, որ «զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը մշտապես եղել և լինելու է Կառավարության ուշադրության կենտրոնում»: Այդ նպատակով նախատեսվում է «մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները»: Կառավարության հնգամյա ծրագրի սույն կետում նաև նշվում է, որ նոր թափ են ստանալու

[56] https://factor.am/652501.html

«զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության հնգամյա ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը»:

Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ զինվորական ծառայության և ավագ դպրոցներում ռազմական կրթության գրավչության խթանման նպատակով միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ տպագրվել են «Զինվորական ծառայության» և «Ռազմական կրթության գրավչության բարձրացման» թեմաներով տեղեկատվական պաստառներ, որոնք փոխանցվել են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի նախարարությանը՝ ավագ դպրոցներում տարածելու նպատակով:

Ինչ վերաբերում է զինծառայողների բնակարանային ապահովմանը, ապա հիփոթեքային վարկավորման ծրագրի հասանելիությունն ու շարունակականությունն ապահովելու և ծրագրից օգտվելու առումով առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 1167-Ն որոշմամբ սահմանվեցին նոր դրույթներ: Ըստ կառավարության 1091-Ն որոշման՝ ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի կարող է շահառու հանդիսանալ և պետական աջակցություն ստանալ ծրագրին մասնակցելու հավանականություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 500 զինծառայող, իսկ նոր որոշմամբ սահմանվում է, որ 2022 թվականին ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման N 2 հավելվածի 5-րդ կետում նշված ժամկետում դիմում-հայտ ներկայացրած և ծրագրի մասնակիցների ռեեստրում գրանցված բոլոր զինծառայողները»:

Տվյալ տարվա վարկավորման ծրագրի շրջանակում հիփոթեքային վարկի տրամադրման պատրաստակամության մասին համագործակցող վարկատու կազմակերպության կողմից տրված տեղեկանքի հիման վրա ծրագրից օգտվելու առաջնահերթությունից օգտվում են օրենքով սահմանված կարգով բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառման վերցված զինծառայողները, արդեն սույն որոշմամբ նաև ռազմաուսումնական հաստատություն ավարտելուց հետո 5 տարվա ընթացքում դիմում-հայտ ներկայացրած սպայական կազմի զինծառայողները, իսկ վիճակահանությունը կազմակերպվում է միայն ծրագրում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք ունեցող զինծառայողների միջև[57]:

[57] https://www.e-gov.am/gov-decrees/item/38746/

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված պատասխան գրության՝ բնակարանային ապահովման միջոցառման իրականացման նպատակով ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության կողմից մշակված ծրագիրը որպես նոր նախաձեռնություն ներառվել է 2023-2025 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի տարեկան բյուջետային ֆինանսավորման հայտի նախագծում:

Ըստ բնակարանային ապահովման նոր ծրագրի՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ռազմաուսումնական հաստատություններ ընդունված, այն ավարտած և սպայական ծառայության անցած զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով կհատկացվեն բնակարաններ: Ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՀՀ ՊՆ համակարգում, կամ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով կհատկացվի բնակարան՝ նրա հետ կնքելով անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: Սահմանված ժամկետով կնքված պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի ժամկետը լրանալու կամ մինչև պայմանագրի ժամկետը լրանալն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու և օրենքով սահմանված կարգով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքերում հատկացված բնակարանը զինծառայողին տրամադրվում է անհատույց սեփականության իրավունքով:

Օրենքով սահմանված այլ հիմքերով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքերում անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը համարվում է լուծված և հատկացված բնակարանի նկատմամբ դադարում է զինծառայողի անհատույց օգտագործման իրավունքը:

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում զինծառայողի՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհվելու (մահանալու) դեպքում, զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացված բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրվում է զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին:

Ծրագիրը ենթադրում է զինծառայողներին անհատույց օգտագործման, իսկ համապատասխան պայմանների դեպքում՝ նաև սեփականության իրավունքով Երևան քաղաքում 3 սենյականոց (մինչև 90 ք.մ.) բնակարանի հատկացում՝ ՀՀ ՊՆ կողմից պատրաստի բնակարանների ձեռքբերման միջոցով[58]:

2023 թվականի մայիսի 18-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ՀՀ Պաշտպանության նախարարությունը քննարկման դրեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և

[58] https://www.mil.am/hy/pages/42

լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[59], որով հստակեցվում է մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր հաշվառված անձանց բնակարանային ապահովության գործընթացը, 6 անձից ավելի ընտանիքի անդամներ ունեցող շահառուների համար սահմանվում են բնակարանային ապահովության նոր պայմաններ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում «ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1539-Ն որոշմամբ սահմանվել են կարգավորիչ ինչպես նաև բարելավող մի շարք դրույթներ[60], համաձայն որոնց՝

- զոհված երկու զինծառայողի (երկու ծնողի, երկու զավակի, ամուսնու և զավակի, ծնողի և զավակի ծնողի և ամուսնու) դեպքում՝ ամսական պարգևավճարի չափը կազմում է յուրաքանչյուր երեխային՝ 76 000 դրամ, իսկ յուրաքանչյուր այլ անդամ՝ 62 000 դրամ,
- սահմանվել են մարտական գործողությունների ժամանակ կամ այլ պետություններում մարտական գործողությունների (խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների ժամանակ) ձևավորմամբ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին և կամավորագրված անձանց ամենամսյա պարգևավճարի նշանակման հետ կապված կարգավորումներ, ինչը նախկինում սահմանված չի եղել,
- սահմանվել են դրույթներ, ըստ որի՝ զոհված ընտանիքին նշանակված պարգևավճարի բաժնեմաս ստանալու իրավունք ունեցող անձի մահվան դեպքում նախատեսված վերահաշվարկից բացի ընտանիքի մյուս անդամի դիմումի հիման վրա պարգևավճարի վերահաշվարկ կկատարվի նաև պարգևավճար ստանալու իրավունքի դադարեցման համար հիմք հանդիսացող ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բարձրացվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի հաշմանդամության, ինչպես նաև վերջիններիս զոհվելու կամ մահանալու դեպքում՝ նրանց ընտանիքի անդամին նշանակվող կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը[61]:

---

[59] «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ - e-draft.am
[60] https://www.e-gov.am/gov-decrees/item/39113/
[61] https://www.e-gov.am/gov-decrees/item/38975/

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1179-Լ որոշմամբ[62] հաստատվել է 2016 և 2020 թվականներին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ վերոնշյալ անձանց աջակցել ձեռք բերել գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ և կարողություններ՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու համար: Ծրագրի իրականացումն ապահովվում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջոցով: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից՝ շահառուն հնարավորություն կունենա անցնել մասնագիտական ուսուցում՝ մինչև 5 ամիս տևողությամբ՝ գործատուի մոտ կամ վերջինիս կողմից ընտրված ուսումնական հաստատությունում կամ Միասնական սոցիալական ծառայության կողմից առաջարկվող ուսումնական հաստատությունում, գործատուի մոտ աշխատանքային փորձառության կազմակերպում՝ 3 ամիս տևողությամբ, շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում՝ միանվագ փոխհատուցման տրամադրում գործատուին:

Առաջին բաղադրիչի շրջանակում շահառուն հնարավորություն կունենա անցնել մասնագիտական ուսուցում՝ մինչև 5 ամիս տևողությամբ: Ուսուցման ամբողջ ժամանակահատվածում շահառուին կտրամադրվի ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 դրամի չափով, բացի այդ կտրամադրվի նաև կրթաթոշակ՝ նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ի չափով: Մասնագիտական ուսուցման դասընթացի ավարտական վկայականն ստանալուց հետո շահառուի հետ մեկ տարի ժամկետով կկնքվի աշխատանքային պայմանագիր, որի շրջանակում գործատուին կտրամադրվի ամսական առավելագույնը 50,000 դրամ՝ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

Երկրորդ բաղադրիչի շրջանակում պատերազմին մասնակցած քաղաքացին հնարավորություն կունենա գործատուի մոտ աշխատանքային փորձառության անցնել՝ 3 ամիս տևողությամբ: Այդ նպատակով կտրամադրվի փոխհատուցում՝ շահառուի աշխատավարձի վճարման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով՝ ամսական կտրվածքով, 3 ամիս ժամկետով, շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար՝ երեք ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 25,000 դրամի չափով և ինն ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 դրամի չափով:

[62] https://www.arlis.am/documentview.aspx?docID=166654

Երրորդ բաղադրիչի շրջանակում, շահառուի հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, գործատուին կտրամադրվի 300,000 դրամի չափով միանվագ փոխհատուցում (գործատուի ցանկությամբ՝ կամ աշխատանքային հարաբերությունների սկզբից կամ 12 ամիսը լրանալուց հետո), եթե վերջինս առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքի 2016 և 2020 թթ.պատերազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց հետ:

«2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերած զինծառայողների սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1173-Լ[63] որոշումը ընդունվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին:

Ռազմական ասոցիացիաների և արհմիությունների եվրոպական կազմակերպությունը՝ euromil.org, իրականացրել է հետազոտություն պարզելու համար, թե ինչպես է սկանդինավյան երկրներում զինվորական ծառայությունն ազդում անհատների աշխատանքի և անձնական կյանքի վրա:

Ուսումնասիրության ամենակարևոր արդյունքը զինծառայողի աշխատանքից ստացած բավարարվածության և աշխատանքային պայմանագրի լուծման միջև ամուր կապն է: Որքան դրական լինի գործատուի աջակցությունն ու ըմբռնումը, այնքան աշխատողներն ավելի բարձր կգնահատվեն պարգևներն ու օգուտները և որքան ավելի լավ աշխատատեղերի պահանջները հարմարեցվեն անհատի շահերին ու հմտություններին, այնքան ավելի շատ դա կհանգեցնի աշխատանքի բավարարվածության բարձրացմանն ու այն լքելու մտադրության նվազեցմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ ուսումնասիրված երկրներում էս զինվորական ծառայության գրավչության բարձրացման համար դիտարկվում է ֆինանսական ապահովումը, հոդվածի հեղինակներն առաջարկում են հաշվի առնել ոչ միայն կադրերի, այսինքն զինծառայողների հավաքագրմանը, այլ նաև նրանց պահպանման ջանքերին:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա 2017 թվականից գործող Զինապահ հիմնադրամը (նախկինում՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ) հատուցումներ է տրամադրում 2020 թվականին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետո՝

- 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին,
- զոհված կամ դատական ակտով անհայտ բացակայող ճանաչված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիքի շահառուներին:

[63] https://www.e-gov.am/gov-decrees/item/39352/

Հիմնադրամը հատուցումներ է տրամադրում նաև 2008-2016 թթ. հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կամ զոհվածների ընտանիքներին՝ տրամադրելով միայն ամսական փոխհատուցումներ:

ՀՀ Կառավարության 2023 թվականի ապրիլի 27-ի նիստում ընդունված որոշման համաձայն 44-օրյա պատերազմի հետևանքով 56 անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին ամսական 300 000 դրամ աջակցության տրամադրման ժամկետը կերկարաձգվի մինչև 2023թ. հունիսը ներառյալ, մինչ այդ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ նախատեսված էր մինչև 2023թ. ապրիլ ամիսը ներառյալ ամենամսյա դրամական վճարի ձևով սոցիալական աջակցություն տրամադրել զինծառայողի ընտանիքին, սակայն ոչ ավելի, քան մինչև անհայտ կորած զինծառայողին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելը[64]:

2017-2022 թթ. հիմնադրամը հատուցում է տրամադրել 5090 շահառուի: Միայն 2022 թ. շահառու է դարձել 411 զինծառայող, իսկ 2023 թ. 1-ին եռամսյակում՝ 52, որոնց մեջ ընդգրկված են նաև Ազատ գյուղի 15 զինծառայողները[65]:

Ինչպես արդեն նշվել է Առաջնահերթություն 1-ում, 2022 թվականի նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ներկայացրեց «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերը[66]:

Նախագծերով նախատեսվում էր պայմանագրային զինծառայողների ատեստավորման միջոցով վերջիններիս համար սահմանել լրավճար: Օրենսդրական փոփոխության նպատակն էր բարձրացնել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը: Այդ նպատակով նախատեսվում էր անմիջականորեն մարտական և դրան հավասարեցված խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների համար սահմանել լրավճար՝ զինծառայողների ատեստավորման միջոցով, և դրանով իսկ ստեղծել նախադրյալներ արհեստավարժ պայմանագրային զինվորական ծառայության զարգացման համար: Ատեստավորմանը զինծառայողներն առաջին անգամ մասնակցում են կամավոր:

---

[64] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148247

[65] https://www.zinapah.am/content/files/file/16776800700119/IFS%20Report%202022%20Annual%20Report%20ARM.pdf, https://shorturl.at/mvHZ5

[66] https://www.e-draft.am/projects/4644/about

Ատեստավորված և հավելավճար ստացող զինծառայողները կարող են ատեստավորվել 3 տարին մեկ անգամ: Իսկ հավելավճարի չափը, ըստ պաշտպանության նախարարի, սահմանվելու է կառավարության որոշմամբ:

2022 թ. դեկտեմբերի 7-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը հաստատվեց և ուժի մեջ մտավ նույն թվականի դեկտեմբերի 23-ին[67]:

Արդեն 2023 թ. փետրվարի 9-ի կառավարության նիստի ժամանակ կառավարությունը հաստատեց «Բանակում մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների որակավորման կարգը», որի արդյունքներով հաշվարկվելու են նաև զինծառայողներին տրվող հավելավճարների չափերը: Առաջարկվում է սպայական կազմի հավելավճարի չափը ատեստավորման «գերազանց» արդյունքի դեպքում սահմանել 470 000 ՀՀ դրամ, «լավ»-ի դեպքում՝ 420 000 ՀՀ դրամ, «բավարար»-ի դեպքում՝ 230 000 ՀՀ դրամ, մյուս կազմերի դեպքում «գերազանց»՝ 395 000 ՀՀ դրամ, «լավ»՝ 345 000 ՀՀ դրամ, «բավարար»՝ 205 000 ՀՀ դրամ[68]:

Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ՀՀ Զինված ուժերում զինվորական ծառայության գրավչության բարձրացման համար որպես առաջնային գործիք դիտարկվում է զինծառայողների ֆինանսական ապահովումը, սակայն որքան էլ կարևոր լինի ֆինանսական ապահովությունը, առանց զաղափարական մոտեցման դժվար կլինի դրական արդյունք ունենալ: Պետք է հաշվի առնել մյուս կարևոր խնդիրը. զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողները շատ դժվար են ինտեգրվում աշխատանքային շուկային, ուստի պաշտպանության նախարարությունը պիտի գնահատի նաև այն ռիսկը, որ շատերը չեն ցանկանա ծառայության անցնել զինված ուժերում նաև այն պատճառով, որ դեռևս աշխատունակ տարիքում կարող են բախվել աշխատանքի շուկա մուտք գործելու դժվարություններին:

[67] https://www.arlis.am/documentview.aspx?docid=172096
[68] https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/05/11/Cabinet-meeting/

Առաջնահերթություն 10

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ, բացի Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործումից, զինված ուժերի կարգապահության խթանումից և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունից, նախատեսվում է նաև առավելագույն ջանքերի գործադրում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը բացառելու ուղղությամբ:

Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ զինվորական կարգապահության, համակարգի ամրապնդման, իրավախախտումները, դեպքերն ու պատահարները նվազագույնի հասցնելու ուղղությամբ ռազմական ոստիկանության կայազորային ստորաբաժանումների աշխատակիցների ու զորամասերի հրամանատարության հետ համատեղ իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ:

Դեռևս 2015 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվել է մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը, որի նպատակն է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում մարդու իրավունքների և բարեվարքության (այդ թվում նաև՝ հակակոռուպցիոն գործունեության) ամրապնդման ապահովումը: Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կազմում գործում է թեժ գծի ծառայությունը, որի հրապարակած տվյալներով 2021 թվականի ընթացքում ստացվել է 46 ահազանգ[69], որից՝

- ծեծի դեպքեր՝ 16
- շահագործում՝ 7
- վիճաբանության դեպքեր՝ 4
- վիրավորանք՝ 8
- այլ՝ 11

69 https://www.mil.am/files/LIBRARY/2021%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

2022 թվականի ընթացքում ստացվել է 16 ահազանգ[70]

- ծեծի դեպքեր՝ 8
- շահագործում՝ 2
- վիճաբանության դեպքեր՝ 2
- վիրավորանք՝ 4

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի տվյալների՝ 2021 թվականի համեմատ 2022 թ. ստացված ահազանգերը նվազել են նվազել է 65 %-ով:

Անդրադառնալով Կազմակերպության գրության պատասխանին, ՊՆ-ն նշել է, որ զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը համագործակցում է ՀՀ ՄԻՊ գրասենյակի, Կառավարության թեժ գծի հետ: Ըստ նույն գրության՝ արձանագրված խախտումների, ահազանգերի հիման վրա ՄԻԲԿ կենտրոնի ներկայացուցիչները իրականացնում են չհայտարարված այցեր ՋՈՒ զորամասեր:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նաև տեղեկացվել է, որ ՀՀ ՊՆ և ՀՀ ՄԻՊ գրասենյակի կողմից համատեղ մշակվում է «Համազգեստով բաղաքացի» հավելվածը (էլեկտրոնային հարթակ), որը ծառայելու է որպես զինծառայողների իրավունքների և պաշտպանության նոր մեխանիզմ:

2023 թվականի ապրիլի 21-ին տեղի ունեցավ Հայաստան-ԵՄ համագործակցության 2023-2026թթ. գործողությունների ծրագրի՝ Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների խթանմանն առնչվող ենթածրագրի բացման միջոցառումը: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել զինծառայողների մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանությանը և զինված ուժերում կանանց դերի ամրապնդմանը՝ բարելավելով կարգավորման շրջանակը և ինստիտուցիոնալ մեխանիզմները, ուժեղացնելով սոցիալական երաշխիքները, հզորացնելով Պաշտպանության նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, զինվորական ոլորտի իրավապահ մարմինների և դատարանների կարողությունները: Ծրագիրը նաև նպատակ ունի աջակցել Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանության 2020-2025 թվականների ազգային ռազմավարության առաջնահերթությունների իրականացմանը:

Ծրագրի ակնկալվող նպատակներն են՝

---

70 https://www.mil.am/files/2022%D5%A9.%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%20%20%D4%B9%D5%A5%D5%AA%20%D5%A3%D5%AE%D5%B8%D5%BE%20%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%A6%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC.pdf

- Աջակցել Պաշտպանության նախարարությանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, դատական և իրավապահ մարմիններին, ինչպես նաև այլ իրավասու պետական մարմիններին մարդու իրավունքների եվրոպական չափանիշների վերաբերյալ փորձագիտական կարծիք տրամադրելով՝ վերանայելու համապատասխան բաղադրությունները, իրավական և կարգավորող շրջանակները:
- Զարգացնել զինված ուժերի անձնակազմի, իրավապահ և դատական մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գիտելիքներն ու հմտությունները՝ բանակում մարդու իրավունքների խախտումներին առնչվող խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար՝ իրենց համապատասխան գործառույթներում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման միջոցով:
- Նպաստել համապատասխան մարմինների մասնագիտական և գործառնական կարողությունների զարգացմանը, որոնք պատասխանատու են բանակում կին զինծառայողների մասնակցության խթանման ապահովման համար:
- Աջակցել հիմնական շահագրգիռ կողմերի՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների ներդրմանը և կիրառմանը՝ ԵԽ չափանիշներին համապատասխան[71]:

2023 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը շրջանառության մեջ դրեց օրենքի նախագիծ, որի ընդունման դեպքում իգական սեռի ներկայացուցիչները կամավորության սկզբունքով կարող են 6 ամսով զինվորական ծառայության անցնել Զինված ուժերում: Այս նախագծով հնարավորություն է տրվում, որ կանայք կամավորության հիմունքներով 6-ամսյա ժամկետային զինծառայություն անցնեն, որից հետո կարող են «Պաշտպան հայրենյաց» ծրագրի տրամաբանությամբ անցնել ավելի երկարաժամկետ զինվորական ծառայության: ՀՀ վարչապետը կառավարության նիստի ժամանակ նշեց՝ խնդիր են դրել, որ կանանց համար հնարավորինս նոր կամ շատ թարմ ենթակառուցվածքներ լինեն, քանի որ նոր էջ է, և պետք է նոր բովանդակությամբ և թարմությամբ այդ գործընթացը սկսել: 6-ամսյա ծառայության ավարտից հետո կանայք կստանան 1 մլն դրամ պարգևավճար: Իգական սեռի զինծառայողներն իրավունք կունենան 6-ամսյա ծառայության հիմքով զորացրվելու փոխարեն «Պաշտպան հայրենյաց» ծրագրով դիմել և անցնել 5 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայության: Հաշվի առնելով զինված ուժերում կանանց ներգրավման կարևորությունը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն անդրադարձել է տարբեր պետությունների զինված ուժերում կանանց ներգրավման հետ կապված փորձին[72], առաջացած խնդիրներին և դրանց լուծման

[71] https://www.coe.int/hy/web/yerevan/-/high-level-launching-of-the-council-of-europe-project-fostering-human-rights-in-the-armed-forces-in-armenia-1
[72] https://hcav.am/womeninarmy-05-05-2023/

մեխանիզմներին, որոնք, ըստ Կազմակերպության, ցույց կտան այն մարտահրավերները, որոնց անխուսափելիորեն կառերեսվեն զինված ուժերում կանանց ներգրավման գործընթացում:

Արդեն 2023 թվականի ապրիլի 21-ի Կառավարության նիստում որոշումը միաձայն ընդունվեց[73]:

Այնուամենայնիվ, ներկա պահին անհրաժեշտ է լուծել մի շարք համակարգային խնդիրներ, զինված ուժերում կանանց ներգրավումն ապահովելու համար՝ անգամ կամավորական սկզբունքներով: Թեպետ պաշտպանության նախարարությունը նշում է, որ սա կհանգեցնի զինված ուժերում կարգուկանոնի ու կարգապահության ամրապնդմանը, սակայն արդյո՞ք կան անհրաժեշտ ենթակառուցվածքներ ու հարմարություններ գործընթացն արդյունավետ իրականացնելու համար, զինված ուժերի անձնակազմն ունի՞ պատշաճ կրթություն և ընկալում կանանց որպես լիարժեք և լիիրավ զինծառայողներ ընդունելու հարցում, հաշվի առնելով հայաստանյան հասարակության մեջ գոյություն ունեցող խտրական վերաբերմունքը կանանց նկատմամբ: Բացի այդ, միանգամայն անհասկանալի է, թե զինված ուժերում կանանց ներգրավմամբ ի՞նչ խնդիր է ուզում պաշտպանության նախարարությունը լուծել, չէ՞ որ առանց այս որոշման ընդունման էլ ցանկության դեպքում կանայք կարող են ծառայության անցնել զինված ուժերում կամ կրթություն ստանալ ռազմական ուսումնական հաստատություններում:

Մտահոգիչ է մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կազմում գործող թեժ գծի վիճակագրությունը 2021 և 2022 թվականների համար, ակնհայտ է, որ 2021-ի համեմատ նվազել են ահազանգերը ոչ կանոնադրային հարաբերությունների մասով, ինչը ինքնին պիտի նպաստեր նաև ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով դեպքերի նվազմանը, մինչդեռ ՊՆ-ն նշում է, որ 2022 թվականի ընթացքում ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած զինծառայողների թվաքանակն աճել է 8%-ով:

Այսինքն, կարող ենք արձանագրել, որ ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեբարքության կենտրոնում ստացված ահազանգերի թիվը գործնականում համարժեք չի զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների վիճակին, և անհրաժեշտ է բարձրացնել Կենտրոնի նկատմամբ վստահությունը զինծառայողների շրջանում:

[73] https://www.youtube.com/watch?v=be-rGgg1cm8

Առաջնահերթություն 11

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման մասին դիտարկվող ժամանակահատվածի համար չկան հրապարակված տեղեկություններ, սակայն դեռևս 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո խիստ մտահոգիչ է հայ-ադրբեջանական նոր սահմանին համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը, խոչընդոտվում է ոչ միայն զինծառայողների ծառայության իրականացման բնականոն ընթացքը, այլ նաև դրա պատճառով արձանագրվում են զինծառայողների, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը, կյանքին և առողջությանը սպառնացող միջադեպեր: 2023 թվականին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում հրդեհ բռնկվեց, ինչի հետևանքով մահացան 15 ժամկետային զինծառայողներ: Ըստ պաշտպանության նախարարության խոսնակի՝ կացարանը, որտեղ տեղակայված էին զինծառայողները, ժամանակավոր էր[74]: Ամիսներ առաջ ՊՆ-ն ձեռք էր բերել իտալական արտադրության մոդուլային զորանոցներ, որոնց առաջին խմբաքանակն արդեն Հայաստանում է, այժմ էլ, ըստ ՀՀ ՊՆ-ի, իրականացվում են տարածքի բարեկարգման, ինժեներական ցանցերի հատկացման աշխատանքներ, որից հետո դրանք կմոնտաժվեն: Մոնտաժման համար որպես վերջնաժամկետ նշվում է 2023 թվականի դեկտեմբերը: Ինչպես արդեն նշվեց, միջադեպից հետո բազմաթիվ զինվորական պաշտոնյաներ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից, սակայն արդյո՞ք խորքային քննարկման առարկա դարձավ տեղի ունեցածը, պարզելու համար, թե ինչի հետևանքով էր անտեսվել զինծառայողների կեցության, ծառայության վայրի կենցաղավարման տարրական պայմանների՝ ջեռուցման,

[74] https://armeniasputnik.am/20230120/zintsarajvoghnery-kacaranum-zhamanakavvor-ein-teghakajvel-hh-pn-54071927.html

ջրամատակարարման, հրդեհային կանոնների և անվտանգության պահպանման ապահովումը: 2022 թվականի սեպտեմբերի 20-ին Արտակարգ իրավիճակների նախարարությունը հաղորդագրություն տարածեց այն մասին, որ ՀՀ ողջ տարածքում պատսպարանների բարեկարգման ծրագրեր են իրականացվում[75]: Հաղորդագրության մեջ ասվում է, որ նաև մետրոպոլիտենի կայարանները, գետնանցումները, դպրոցների ու մանկապարտեզների նկուղային հարկերը կարող են ծառայել որպես ապաստարան և որ պատերազմական պայմաններում դրանք նվազեցնում են հարվածային ալիքի ուժգնությունը: Հատկապես 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո պարզ դարձավ, որ առկա ապաստարաններից շատերը ունեն հիմնանորոգման կարիք: Ապաստարանների հարցը լուծված չէ նաև սահմանամերձ բնակավայրերում, ինչը խիստ մտահոգիչ է: ՀՀ ՏԻՄ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ կետը[76] վերաբերում է աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը: Բացի այդ, համայնքային բյուջեներում կա քաղաքաշտպանության հատկացումներին վերաբերող առանձին տող: Սակայն, ըստ Հետք մեդիա գործարանի իրականացրած հետազոտության, ոչ բոլոր համայնքներն են, որ բյուջեում ունեն նման հատկացումներ[77]: Փաստացի, թե՛ սահմանամերձ, թե ոչ սահմանամերձ համայնքներում պիտի իրականացվեն ապաստարանների բարեկարգման աշխատանքներ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացումը կարևոր է հատկապես պատերազմի վերսկսման վտանգի մեջ գտնվող երկրի համար, ուստի հնարավորինս սեղմ ժամկետներում հարկավոր է ապահովել նման օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության բարձրացումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփենք ՀՀ կառավարության 2021 - 2026 թթ. գինված ուժերի բարեփոխումներին և զարգացմանն ուղղված հնգամյա ծրագրով սահմանված գործողությունների կատարման վերաբերյալ հասանելի տեղեկությունները՝ համեմատելով դրանք 2021 և 2022 թթ. ընթացքում իրականացված գործողությունների հետ:

[75] http://mes.am/hy/news/item/2022/09/20/1203/
[76] https://www.irtek.am/views/act.aspx?aid=150060
[77] https://mediafactory.am/our-products/border-communities-shelters

1. Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի

1.1 Ինչպես անդրադարձել էինք ՀՀ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Կազմակերպության հրապարակած 2021[78] և 2022[79] թթ. տեղեկանքներում, այժմ ևս արձանագրում ենք, որ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի մեկնարկից ավելի քան երկու տարի անց <u>զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ վերջնական որոշում չի կայացվել</u>, և զինված ուժերում ներկայումս շարունակում է գործել մինչ այժմ կիրառվող: Բացի այդ, ինչպես նախորդ տեղեկանքներում, այժմ ևս արձանագրում ենք, որ պրոֆեսիոնալ բանակի անցնելու գաղափարի հիմքում որպես շահագրգռող գործոն դրվում է զինծառայողների ֆինանսական ապահովությունը, հանձինս 2023 թ. մեկնարկած ատեստավորման մեխանիզմի և «Պաշտպան հայրենյաց» ծրագրի:

2. Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում

2.1 Ինչպես և նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին, այժմ ևս ազգային անվտանգության նոր ռազմավարության և ռազմական նոր դոկտրինի մշակման աշխատանքները դեռևս սկսված չեն, և հայտնի չէ՝ դրանց ուղղությամբ ինչ աշխատանքներ են իրականացվում: Հայտնի չէ նաև այն, թե արդյոք իրականացվել են քայլեր միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ, թե ոչ:

2.2 Առաջադրված խնդիրների լուծման նպատակով մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ զորամիավորումների ու ստորաբաժանումների կազմավորման մասին տեղեկություններ հայտնի չէին ինչպե՛ս նախորդ տեղեկանքները հրապարակելիս, այնպե՛ս էլ այժմ:

[78] https://hcav.am/zekuyc-pn-30-11-2021/
[79] https://hcav.am/military-reforms-21/

2.3 Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ ավտոմատացված կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ զինված ուժերի կառավարման և զորային օղակներում նախապատրաստվում են կազմակերպչական և հաստիքային փոփոխություններ, սակայն հստակ չի նշվում, թե կազմակերպչական և հաստիքային ինչպիսի փոփոխությունների մասին է խոսքը և երբ է նախատեսվում դրանք ավարտել:

3. Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով

3.1 Ընդգծելով այն փաստը, որ հետպատերազմյան Հայաստանի Հանրապետության զինված ուժերում փոխվել է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի 4 պետ և այն հանգամանքը, որ 2020 թ նոյեմբերից մինչ այժմ, շուրջ երեք տարվա ընթացքում, ՀՀ զինված ուժերում իրականացվել է առնվազն 39 զինվորական պաշտոնյայի փոփոխություն, կարող ենք պնդել, որ չլուծված հակամարտության պայմաններում գտնվող և պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի առջև կանգնած պետության ռազմական ղեկավարման կազմակերպումը դեռևս պատշաճ մակարդակով ապահովված չէ:

4. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման խթանում, սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման, ռազմական ներուժի ավելացում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացման շնորհիվ

4.1 Ինչպես նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին, այժմ ևս ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման խթանմանն ուղղված գործողությունների մասին տեղեկություններ հայտնի չեն, ինչը գուցե պայմանավորված է ոլորտին առնչվող գործողությունների գաղտնիությամբ, սակայն մյուս կողմից այս բնագավառին առնչվող հրապարակային որևէ տեղեկության բացակայությունը կամ անդրադարձի բացակայությունը, վկայում է, որ այս առաջնահերթության ուղղությամբ ռազմավարությունը դեռևս հստակեցված չէ:

4.2 Նախորդ երկու տեղեկանքներում անդրադարձել էինք այն հանգամանքին, որ դաշնակից և գործընկեր պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող քաղաքականությունը արդյունավետ չէ, հաշվի առնելով այն փաստը, որ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում կոռուպցիան ունի համակարգային բնույթ և պաշտպանված չեն զինծառայողների իրավունքները: Դիտարկվող ժամանակահատվածում երկու պետությունների դաշնակցային համագործակցության անարդյունավետությունը առավել ընդգծվեց Ռուսաստանի Դաշնության կողմից դաշնակցային պարտավորությունների չկատարման փաստով, մասնավորապես Հայաստանի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիաների ժամանակ ՀԱՊԿ պարտավորությունների

շրջանակներում Հայաստանին աջակցություն չտրամադրելու փաստով և 2022 թ. վերջին ի հայտ եկած այն հանգամանքով, որ մինչ 2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունները դաշնակից Ռուսաստանի Դաշնությունից գնված սպառազինությունը չի մատակարարվել Հայաստանի Հանրապետություն, չնայած դրա համար արդեն վճարված էր:

4.3 Անդրադառնալով ՀՀ և ՌԴ պաշտպանության և անվտանգության ոլորտի ներկայացուցիչ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաների հանդիպումներին՝ կարող ենք արձանագրել, որ Կազմակերպության կողմից 2021 և 2022 թվականներին հրապարակած տեղեկանքներում ՀՀ զինվորական պաշտոնյաների այցերը Ռուսաստանի Դաշնություն կտրուկ տարբերվում են միմյանցից և 2023 թ. հունիսի դրությամբ կատարված այցերից: Մասնավորապես՝ 2020 թ. նոյեմբերի 9-ից մինչև 2021 թ. նոյեմբերի կեսն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել հայ-ռուսական զինվորական պաշտոնյաների առնվազն 18 հանդիպում, 2021 թ. նոյեմբերի կեսից մինչև 2022 թ. հուլիսի կեսը՝ 8 ամսվա ընթացքում՝ 4 հանդիպում, իսկ 2022 թ. հուլիսի կեսից մինչև 2023 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ զինվորական պաշտոնյաները աշխատանքային այցով առնվազն 5 անգամ մեկնել են ՌԴ, մինչդեռ որևէ պաշտոնական այց ՌԴ-ից ՀՀ չի կատարվել կամ նման մասնավոր այցերի մասին տեղեկությունները չեն հանրայնացվել: Փաստորեն, 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո ՀՀ և ՌԴ զինվորական պաշտոնյաների հանդիպումների հաճախականությունը նախ նվազել է 78 %-ով, ինչը կարող է պայմանավորված լինել և՛ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած պատերազմով, և՛ ՀԱՊԿ շրջանակներում Ռուսաստանի դաշնակցային հարաբերությունների պարտավորությունների չկատարմամբ, ապա 2023 թ ավելացել 25 %-ով, ինչը վկայում է այն մասին, որ չնայած այս ամենին, ինչպես նախկին երկու տեղեկանքներում էինք արձանագրել, այժմ ևս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխման և զարգացման գործընթացն իրականացվում է մեծամասամբ Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ և մասնակցությամբ՝ այլ պետությունների հնարավորություններն ու ռեսուրսները օգտագործելով նվազագույն չափով կամ ընդհանրապես չօգտագործելով:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության շրջանակներում իրականացված այցերին, հարկ է նշել, որ 2022 թ. հուլիսից հետո դրանք առավել հաճախակի են դարձել 2021 և 2022 թվականներին տեղեկանքների հրապարակման պահի դրությամբ կատարված այցերի համեմատությամբ: Եթե 2020 թ. նոյեմբերից մինչև 2021 թ. նոյենբեր ընկած ժամանակահահատվածում կայացել է ՆԱՏՕ-Հայաստան ընդամենը 1 հանդիպում, իսկ 2021 թ. նոյեմբերից մինչև 2022 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում 2 հանդիպում, ապա 2022 թվականի հուլիսից մինչև 2023 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում առնվազն 9 հանդիպում է տեղի ունեցել[80]:

[80] https://www.mfa.am/hy/international-organisations/3

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է արձանագրել, որ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում հանդիպումների հաճախականությունն այժմ ավելի ինտենսիվ է, քան նախկինում, ինչը նոր գործոն է ՀՀ ռազմական օրակարգի փոփոխության տեսանկյունից:

5. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում, տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերի իրագործում, ՀՀ պետական սահմանի պահպանություն

5.1 Նախկին երկու տեղեկանքների հրապարակման պահի դրությամբ հայտնի չէր, թե ինչ գործողություններ են իրականացվել և ինչ որոշումներ են ընդունվել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործմանն ուղղված: Այժմ, չնայած կան տեղեկություններ, որ տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերի կյանքի կոչման նպատակով մշակվել է Տարածքային պաշտպանության և տեղական պաշտպանության մասին նոր հայեցակարգ, սակայն այն դեռևս չի հրապարակվել: Միաժամանակ այս համատեքստում հստակ չէ, թե արդյոք ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման, տարածքային պաշտպանության համակարգի ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը բխում են պահեստազորում հաշվառված անձանց իրավունքների պաշտպանությունից, թե՝ ոչ: Բացի այդ, ինչպես նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին, այժմ ևս հայտնի չէ՝ արդյոք ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգի կատարելագործման համար կառուցվածքային և տեխնիկական ինչ լուծումներ են տրվել, և ինչ նոր գաղափարական մոտեցումներ են դրված ակտիվ աշխարհազորի և պահեստազորի հետ անցկացվող պատրաստությունների անցկացման հիմքում:

5.3 Նկատենք, որ ի տարբերություն 2021 և 2022 թթ., երբ շարունակում էին գործել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մինչպատերազմյան մեխանիզմները, որոնց կատարելագործման ուղղությամբ իրականացվող քայլերի, նախագծերի, մոտեցումների մասին հասարակությունը տեղյակ չէր, 2023 թվականից իրականացվել են որոշակի գործողություններ՝ ուղղված նախորդ տարիներին անցկացվող վարժական հավաքների ժամանակ ի հայտ եկած խնդիրների վերացմանը կամ նվազեցմանը, սակայն դեռևս մնում են չլուծված խանդիրներ: Վարժական հավաքների կազմակերպման ընթացքում արդեն իսկ արձանագրված խնդիրները վկայում են, որ այս ուղղությամբ պետք է շարունակվեն իրականացվել զորահավաքի մեխանիզմների կատարելագործման համար անհրաժեշտ և արմատական քայլեր:

6. Ռազմական կրթության և գիտության զարգացում, ՀՀ զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացների վերանայում, տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթաց, տեղեկատվական ու հոգեբանական ազդեցությունների ավելացում, ապագայամետ ռազմական կրթություն

6.1 ՀՀ զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացների վերանայման արդյունքում մշակվել են ծրագրեր, մասնավորապես՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, զորահավաքային պատրաստության համար 25-օրյա պատրաստության ծրագիրը, ինչպես նաև ՋՈՒ զինծառայողների ատեստավորման հարցաշարերը և դրա շրջանակներում՝ գործնական վարժությունները, որոնք նախորդ տեղեկանքների հրապարակման պահին դեռևս ներդրված չէին, մինչդեռ հայտնի չէ՝ որքանով են դրանք համապատասխանեցվել ՀՀ զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին, քանի որ զինված ուժերին առաջադրված խնդիրների մեծ մասը հանրայնացման ենթակա չէ:

6.2 Նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին տվյալներ հայտնի չէին «Արհեստավարժ սերժանտական համակարգի» ներդրման մասին: Այժմ, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, իրականացվում են աշխատանքներ ՀՀ զինված ուժերում «Արհեստավարժ սերժանտական համակարգի» ներդրման ուղղությամբ: Դեռևս տվյալներ չկան, թե ինչ փուլում է գտնվում այդ աշխատանքների իրականացումը և թե ինչ բաղադրիչներ է ներառում «Արհեստավարժ սերժանտական համակարգը»:

6.3 Նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին տվյալներ հայտնի չէին ՀՀ զինված ուժերում նորագույն տեխնոլոգիաների և վարժասարքերի ներդրմամբ ուսումնական բազայի զարգացմանը և կատարելագործմանն ուղղված գործողությունների իրականացման մասին: Ներկայումս, ըստ ՀՀ ՊՆ-ի, իրականացվում են քայլեր այդ ուղղությամբ, ինչը իհարկե շատ կարևոր է ռազմական կրթության և գիտության զարգացման տեսանկյունից, սակայն կրկին հայտնի չէ, թե նշված նորագույն տեխնոլոգիաները և վարժասարքերը որքան պատշաճ և նպատակային են կիրառվում ուսումնական գործընթացում:

6.4 2021 և 2022 թվականներին տեղեկանքների հրապարակման պահին տեղեկություններ հայտնի չէին սպայական ավագ դպրոցի ստեղծման մասին: Ներկայումս, ըստ ՊՆ-ի, սպայական ավագ դպրոցի ստեղծման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ՊՆ-ն համագործակցում է Ներքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, ԱԱԾ-ի հետ: Միաժամանակ ՊՆ-ի կողմից չի մասնավորեցվում, թե ինչպիսի գործողություններ են իրականացվում նշված կառույցների հետ, այդ պատճառով այս պահին անհնար է գնահատել, թե որքան արդյունավետ են դրանք:

6.5 Ինչպես և նախորդ տեղեկանքներում, այժմ ևս չկան տեղեկություններ այն մասին, թե որքանով է ապագայամետ ՀՀ-ի ներկայիս ռազմական կրթությունը, քանի որ հայտնի չեն ՀՀ ՊՆ-ի կողմից սահմանված ապագայամետ ռազմական կրթության հստակ չափանիշները Հայաստանի Հանրապետության համար նոր աշխարհաքաղաքական պայմաններում:

6.6 Պատերազմավարման հիմնադրույթների, մարտական գործողությունների պլանավորման և վարելու ձևերի կրթական ծրագրերի վերանայման մասին այժմ ևս, ինչպես և նախորդ տեղեկանքների հրապարակման պահին, տեղեկություններ չկան:

6.7 Ի տարբերություն նախորդ երկու տեղեկանքների, որոնցում հստակ արձանագրել էինք, որ ռազմական կրթության որակի բարձրացմանը և սպաների գիտելիքների գնահատմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվել, այժմ առնվազն կարելի է խոսել սպաների ատեստավորման միջոցով իրենց զբաղեցրած պաշտոններին գիտելիքների, կարողությունների համապատասխանության և բարեվարքության ստուգման աշխատանքների իրականացման մասին: Իսկ թե որքանով անաչառ կգնահատվեն սպաների այդ գիտելիքները և կարողությունները, այժմ դեռևս անհնար է գնահատել:

6.8 Ինչպես արձանագրել ենք նախորդ երկու տեղեկանքներում՝ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության դեպքերը հետևանք են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության ոչ պատշաճ պահպանման: Այժմ ևս, հաշվի առնելով ՀՀ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում, հատկապես ոչ կանոնադրային հարաբերությունների, անվտանգության և մարտական ծառայություն կրելու կանոնների հետևանքով մահվան դեպքերի առկայությունը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ զինված ուժերում կրթության ոչ բավարար մակարդակը շարունակում է մնալ զինված ուժերի բարեփոխումներին խոչընդոտող կարևորագույն հանգամանքներից մեկը:

7. Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործում

7.1 Ինչպես 2021 և 2022 թթ. տեղեկանքներում ենք արձանագրել, այժմ ևս տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ հրապարակված տեղեկությունները շատ սուղ են, ուստի նշված ոլորտում իրականացված քայլերի մասին կարելի է պատկերացում կազմել միայն ՀՀ ՊՆ կողմից 2023 թ. փետրվարին Կազմակերպությանը տրամադրած տեղեկությունների հիման վրա այն մասին, որ նախատեսվում է իրականացնել օրենսդրական փոփոխություններ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ու «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներում: Բացի այդ, ըստ ՀՀ ՊՆ-ի, առկա են տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման գործող մեխանիզմներ, որոնք, սակայն, հրապարակման ենթակա չեն: Ըստ էության, կիբերանվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումները և գործողությունները ինչպես նախկինում, այժմ ևս հնարավոր չէ գնահատել հիմնականում դրանց գաղտնիության պատճառով:

8. Ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը

8.1 Չնայած ՀՀ ՊՆ-ի կողմից տեղեկացվում է ՀՀ զինված ուժերում զինվորական հոգեբանների ինստիտուտի զարգացման և կատարելագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների՝ այդ թվում մասնագիտական կրթության ծրագրերով վերապատրաստումների մասին, հավելելով նաև, որ փուլային կարգով զորամասերում ներդրվում են սպա-հոգեբանների հաստիքներ, սակայն նշված գործողությունների իրականացումը ինչպես նախորդ երկու տեղեկանքներում ենք նշել, այժմ ևս տեսանելի արդյունք չի արձանագրել, ինչի հավաստումն են զինված ուժերում հանցագործությունների, կանոնադրային հարաբերությունների խախտումների դեպքերը, նվազման միտում չունեցող մահվան՝ հատկապես ինքնասպանության, սպանության հետևանքով մահվան դեպքերը:

9. Մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները, բնակարանային ապահովման ծրագրերը, բարձրացնել զինծառայողների աշխատավարձերը

9.1 Եթե նախկին տեղեկանքների հրապարակման պահի դրությամբ պարզ չէին այն մեխանիզմները, որոնցով նախատեսվում էր կատարելագործել զինծառայության գրավչությունը, ապա այժմ ակնհայտ է, որ զինծառայողների նյութական ապահովման երաշխիքների ձևավորման ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Սակայն ներկայումս, ինչպես և նախկինում, ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայության նկատմամբ գրավչության բարձրացման համար շարունակվում է որպես առաջնային գործոն դիտարկվել զինծառայողների ֆինանսական ապահովումը, մինչդեռ ֆինանսական ապահովության խնդրի հետ միասին անհրաժեշտ է լուծել առանց գաղափարական մոտեցման ձևավորման խնդիրները, առանց որի դժվար կլինի որևէ դրական արդյունք ապահովել:

9.2 Չնայած բնակարանային ապահովման ծրագրերի կատարելագործման ուղղությամբ ներկայումս կատարվող փոփոխություններին, որոնք մեկնարկել են դեռևս Կազմակերպության երկրորդ տեղեկանքը հրապարակելու պահին՝ 2022 հուլիսին, այնուամենայնիվ դեռևս ամբողջությամբ լուծված չէ 1990-ական թվականներից մինչ օրս բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում ներգրավված նախկին զինծառայողների բնակարանային ապահովման խնդիրը:

9.3 Նախորդ երկու տեղեկանքների հրապարակման պահին զինծառայողների աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ էական քայլեր չէին իրականացվել: Այժմ պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի բարձրացման մեխանիզմն իրականացվում է ատեստավորման գործընթացի միջոցով: Դեռևս պարզ չէ, թե որքանով արդյունավետ և թափանցիկ կլինեն ատեստավորման արդյունքները, և որքանով է պաշտպանական գերատեսչությունը գնահատել ատեստավորման արդյունքում անբավարար գնահատական ստացող պայմանագրային զինծառայողներին զինված ուժերի համակարգից հեռացնելու հետևանքները զինված ուժերի համար:

9.4 Ինչպես արձանագրել ենք նախորդ երկու տեղեկանքներում, այժմ ևս պարզ չեն, թե ինչ համակարգային մեխանիզմներով է նախատեսվում ապահովել զինծառայողի հեղինակության բարձրացումը:

10. Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն, ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերի բացառում

10.1 Ինչպես նախորդ երկու տեղեկանքներում ենք արձանագրել, մինչ այժմ սահմանված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

10.2 Ինչպես նախկին տեղեկանքներում այժմ ևս արձանագրում ենք, որ ՀՀ զինված ուժերում շարունակվող ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության մտահոգիչ դեպքերը վկայում են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության պաշտպանության ոլորտում բացերի մասին, և հայտնի չէ՝ զինվորական կարգապահության խախտման դեպքերի կանխման ուղղությամբ ինչ հստակ քայլեր են իրականացվում:

11. Կանանց ներգրավումը ՀՀ զինված ուժերում

11.1 Կանանց ներգրավումը ՀՀ զինված ուժերում նորություն չէ, քանի որ ՀՀ ռազմաուսումնական հաստատություններում իգական սեռի քաղաքացիների ընդունելություն սկսել է անցկացվել դեռևս 2013 թ-ից: 2023 թ.-ից ՀՀ կառավարությունը նախաձեռնեց կանանց ժամկետային զինվորական ծառայության մեջ ներգրավելու առաջին գործնական քայլերը, որոնք նախորդ տեղեկանքների հրապարակման պահին դեռևս մշակված չէին: Չնայած պաշտպանության նախարարությունը նշում է, որ կանանց ներգրավումը զինված ուժերում կհանգեցնի զինված ուժերում կարգուկանոնի ու կարգապահության ամրապնդմանը, սակայն պարզ չէ՝ արդյոք կան անհրաժեշտ ենթակառուցվածքներ ու պայմաններ, այդ թվում հարմարեցումներ և միջավայր զինված ուժերում կանանց արժանապատիվ զինծառայության ապահովման համար:

12. Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում

12.1 2020 թվականի **44**-օրյա պատերազմի ժամանակահատվածում հստակ բացահայտվեց անհրաժեշտ քանակի և պայմաններով հագեցած ապաստարանների բացակայության խնդիրը, սակայն ապաստարանների խնդիրը մինչ օրս լուծված չէ ՀՀ ամբողջ տարածքում և հատկապես սահմանամերձ բնակավայրերում, ինչը ինքնին շատ մտահոգիչ է պատերազմի վերսկսման վտանգի առաջ կանգնած երկրի համար:

12.2 2021 թ. հրապարակված տեղեկանքում արձանագրել ենք, որ **2020** թ. **44**-օրյա պատերազմից հետո հայ-ադրբեջանական նոր սահմանին համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է զինծառայողների ծառայության իրականացման բնականոն ընթացքը և սպառնում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը: **2022** թ. հրապարակված տեղեկանքում անդրադարձանք ՀՀ պաշտպանության նախարարի այն հայտարարությանը, որ պատերազմից հետո առաջացած նոր սահմանները կահավորելու, առաջնագիծ հասնող ճանապարհների կառուցման ուղղությամբ հսկայական աշխատանք է տարվում: Մինչդեռ այժմ բավարար տեղեկությունների բացակայության պատճառով հնարավոր չէ գնահատել, թե որքանով է հաջողվել կահավորել առաջնագիծը, ստեղծվել են արդյոք անհրաժեշտ ենթակառուցվածքներ, մասնավորապես դեպի մարտական հերթապահության դիրքերը տանող անվտանգ և բարեկարգ ճանապարհներ, թե ոչ:

Բացի զինված ուժերում բարեփոխումների իրականացման ընթացքի վերաբերյալ վերը նշված բոլոր եզրահանգումներից, հավելենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը Կազմակերպությանը տեղեկացրել է, որ բարեփոխումներն իրականացվում են բոլոր ոլորտներում՝ ռազմական կառավարման համակարգի, ԶՈՒ կազմկառուցվածքի, մարտական հերթապահության կատարելագործման, զորատեսակների կրակային հնարավորությունների և կարողությունների ավելացման, ռազմական ենթակառուցվածքի, զորքերի տեղակայման վայրերի և այլ ուղղությամբ, սակայն տեղեկատվության գաղտնիության ապահովման նպատակով հավելյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ պաշտպանությունը համարել է ոչ նպատակահարմար: